ՓԱՐՈՍ

ԽՄԲԱԳԻՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԱՑ

Հրատարակեալ

Ի ԶԱՐՄԱՅՐԱՑ ՄՍԵՐԵԱՆՑ

«Լա՛ւ է անեղան քան ոչ երբէք»։

(Ա-ա՛ղ)։

ՏԵՏՐ Գ։ — 1875 ԱՄԻ։

Ի ՄՈՍԿՈՒԱ
Imprimerie W. Gautier,
à Moscou. au pont des Maréchaux, maison Torletzky.
1875.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ՓԱՐՈՍԻ նիւթն է Բանասիրական գիտելիք, և ըստ մեծի մասին Բանաքննական յօդուածներ։

ՓԱՐՈՍԻ հրատարակչին հետ թղթակցիլ ցանկացողքն իւրեանց նամակաց հասցէն գրելու են այսպէս։ Въ Москву, близъ Меньшиковой башни, домъ Милованова, Г-ну Зармайру Мсеріанцъ.

ՓԱՐՈՍ տեսար Ա։ 1872։ Գինն է 50 կոպ։
ՓԱՐՈՍ տեսար Բ։ 1873։ Գինն է 60 „
ՓԱՐՈՍ տեսար Գ։ 1874։ Գինն է 50 „

ՎԱՃԱՌԵԼԻ ԳՐԵԱՆՔ։

1։ ՀԱՒԱՏԱՊԱՏՈՒՄ, այն է՝ Մանր Ուսմունք Քրիստոնէական Հաւատոյ։ Մաէրայ Մ։ Մաէրեանց։ Գին իւրաքանչիւրոյ 25 կ։ արծ։

Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 22 կոպ։
„ „ „ 50 „ „ 20 „
„ „ „ 100 „ „ 18 „

2։ ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ Ազգային Եկեղեցական Պատմութեան։ Նոյն հեղին։ Գին իւրաքանչիւրոյ 25 կ։ արծ։

Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 22 կոպ։
„ „ „ 50 „ „ 20 „
„ „ „ 100 „ „ 18 „

3։ ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ Սրբազան Պատմութեան Աւետարանի։ Նոյն հեղին։ Գին իւրաքանչիւրոյ 40 կ։ արծ։

Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 35 կոպ։
„ „ „ 50 „ „ 32 „
„ „ „ 100 „ „ 30 „

4։ ՀՐԱՀԱՆԳ Քրիստոնէական Հաւատոյ, ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց։ Նոյն հեղին։ Գին իւրաքանչիւրոյ 75 կոպ։ արծ։

Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 60 կոպ։
„ „ „ 50 „ „ 55 „

ՔՐԻՍՏՈՍԱՊԱՏՈՒՄ, այն է՝ Համառօտութիւն Աւետարանական պատմութեան հանդերձ ծանօթութեամբք։ Նոյն հեղին։ Գին իւրաքան։ 50 կոպ։ արծ։

Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 45 կոպ։
„ „ „ 50 „ „ 42 „



ՏՓԽԻՍՈՑ ՀԱՅՈՑ ԱՌԱՔՅԱՆԱՐԻԱՆՆ, ՅՈՐՈՒՄ Ի 13 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1857 ԱՄԻ
ԱՌԽՃԱՆՆՑԱՆ ՆԵՐՍԷՍ Ե՛ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՏԵՏՐ Դ. — 1875 ԱՄԻ։

ՓԱՐՈՍ

ԽՄԲԱԳԻՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԱՑ

'Ի ԳՐՈՒԱԾՈՑ

ՆԵՐՍԻՍԻ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա.

Ո՛Չ ԲՆԱՒ ՔԱՌԱՆԻ ՀԱՒԱՏԱԲԱՐԵԼՈՒՆ Է-Է ԿԱՌՈՂԻԿՈՍՅՆ ԱՌՈՒԱՌԵԼՈՅ ՅԱՂԹԱՄԱՐ ԵՒ 'Ի ՍԻՈՆ ԸՆԴ ԿԱՌՈՂԻԿՈՍՅ ԼԻՆԵԼՈՅ։

Կաթուղիկոսք Աղթամարայ և Սսոյ ոչ բնաւ համարեցան կամ համարին այժմ ըստ օրինաց Կաթուղիկոսք՝ յաղագս այլազգական բռնութեամբ հեթանոսաց ապօրինաւոր սկզբնաւորութեանցն այնոցիկ հակառակաթոռ նշանակեալ օրինաւոր Կաթուղիկոսութեան ամենայն Հայոց։ Քանզի յամի 1113 'ի զօրանալ իշխանութեան Ռուբինեանց 'ի Կիլիկիայ՝ ուր է Սիս քաղաքն՝ յորժամ առաջին Կաթուղիկոս անդէն ընտրութեամբ Տեառն Բարսղի վերջին Կաթուղիկոսի Անեցոյ՝ և հաւանութեամբ բազմութեան եպիսկոպոսաց, վարդապետաց և իշխանաց Հայոց օծաւ 'ի քսան ամեայ հասակի Գրիգորիոս Պահլաւունի

յաղդէ սուրբ Լուսաւորչի՝ գերազանցեալ իմաստութեամբ և առաքինութեամբ առաւել քան զբազումս 'ի ծերոց, արք եպիսկոպոսն Աղթամարայ Դաւիթ՝ նախանձեալ ընդ այն, հաւանեցոյց զՀայաստանեայց մահմեդական իշխողն Աղթամարայ 'ի կամս իւր, և ձեռնտուութեամբ նորա ժողովեալ զՀինգ եպիսկոպոսունս, հաճեցոյց և զմիս նոցա՝ յառաջ բերելով նոցա և ժողովրդոց վիճակի իւրոյ պատճառս, թէ ասա յԱղթամար նստեալ են յառաջագոյն Կաթուղիկոսք՝ որոց զերեզմանք ևս ասա են ահաւասիկ. և թէ՝ դատնին ասէն նաև Աչ սրբոյ Լուսաւորչին, և սեղան նորա, և քօղն, և գաւազանն, և գօտին մաշկեղէն, և այլ նշանք սրբոց. և թէ՝ ասա 'ի Վասպուրական՝ էր յառաջագոյն Աթոռ թագաւորութեան Հայոց Արծրունեաց. ըստ որոց արժան է լինիլ և Կաթուղիկոս: Եւ այսպէս ձեռնադրեալ 'ի նոցունց՝ նստաւ հակառակաթոռ անդէն յԱղթամար. ուր և տեւէ այն յաջորդութիւն նորա մինչև ցայսօր ընդ պաշտպանութեամբ այնոցիկ Հայաստանի իշխանաց՝ առանց ամենևին մասնակցութեանց ամենայն նախազրեալ արժանաւորութեանցն կաթուղիկոսաց Էջմիածնի. նա իսկ և անհաւասարապատիւ ամենայն արք եպիսկոպոսաց ձեռնադրելոց 'ի Կաթուղիկոսաց Էջմիածնի, ունելով ընդ իւր և զփոքրիկ վիճակ 'ի միում մասին Վասպուրականի 'ի շրջակայս վանիցն Աղթամարայ:

Կման նմին և յետ բարձման թագաւորութեան Ռուբինեանց 'ի Կիւլիկիոյ յամի 1375, նեղեալ և անգանօր յայլազգական բռնութեանց ամիրայից Եղիպտոսի և այլոց մահմետականաց կաթուղիկոսք Հայոց, միաբանեցան բազմութիւնք արևելեան և արևմտեան ազգ եպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց և իշխանաց Հայոց, վերադարձուցանել զԿաթուղիկոսութիւնն անդրէն 'ի սեպհական աթոռ մեծ Քահանայապետութեան ամենայն Հայոց 'ի սուրբ Կաթուղիկէն Էջմիածին, և հրաւիրեցին զՏէր Գրիգոր Մուսաբէկեանց՝ որ էր յայնժամ կաթուղիկոս 'ի Կիւլիկիայ՝ թողուլ զԱխս, և դալ Յէջմիածին· այլ նա ոչ յօժարեալ ընդ այն, եկաց անդէն 'ի Կիւլիկիայ· յորժամ հաւանութեամբ և հաճութեամբ ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց ազգի Հայոց՝ յամի 1441, ընտրեցին Կաթուղիկոս ամենայն Հայոց զՏէր Կիրակոս, և օծեալ զնա Յէջմիածին, զնա ընկալան առհասարակ՝ որպէս բնակիչք մեծին Հայոց, այնպէս և բնակեալքն 'ի մերձակայ սահմանս Կիւլիկիոյ, և Յերուսաղէմ, ՅԱնտիոքիայ, 'ի Կոստանդնուպօլիս, 'ի Պոնտոս, 'ի Ղրիմ, 'ի Պարսս, 'ի Վրիս, և յայլ տէրութիւնս՝ որք զԱթոռն Էջմիածնի միայն ճանաչէին հարազատ տեղի Կաթուղիկոսութեան ամենայն Հայոց։ Այլ Գրիգոր Մուսաբէկեանց կացեալ անդէն 'ի Կիւլիկիայ վախճանեցաւ յամի 1447, յորժամ Կարապետ վարդա-

պետ ոմն 'ի Սսոյ զիմեալ առ ամիրայն Կիւլեկիոյ որ իշխէր անդէն ընդ իշխանութեամբ սուլդանին Եգիպտոսի, և խոստացեալ նմա վճարել ամ ըստ ամէ 300 դահեկան, էառ 'ի նմանէ զիշխանութիւն կաթուղիկոսութեան անդէն 'ի Սիս. որ և ընդ նովին հարկատուութեամբ տևէ մինչև ցայսօր առանց այլ ամենայն արժանաւորութեանց յաջակացելոց օրինաւոր կաթուղիկոսութեան ամենայն Հայոց աթոռակալի սրբոյ Լուսաւորչին սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի Աբրահամեան Աթոռոյ, անուանեալ միայն Կաթուղիկոս Կիւլեկիոյ։

Երկոքին նոքա Կաթուղիկոսն Աղթամարայ և Կաթուղիկոսն Սսոյ ոչ կրէին համարձակին անուանել զինքեանս մեծ Հայրապետ, կամ Աթոռակալ և Փոխանորդ սրբազան Առաքելոյն Թադէոսի և սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, կամ Գլուխ եկեղեցւոյ, կամ Առաջնորդ հաւատոյ, կամ Հայրապետ, Եպիսկոպոսապետ, Հօտապետ, Հովուապետ, և Հայրագոյն Պատրիարգ ամենայն ազգի Հայոց. այլ միայն զանունն կաթուղիկոսական կրեն մասնաւորաբար, առաջինն անուանեալ Կաթուղիկոս Աղթամարայ, և երկրորդն Կաթուղիկոս տանն Կիւլեկիոյ։ Երկոքին նոքա օրհնեն զՄիւռոն, և ձեռնադրեն զեպիսկոպոս. այլ ոչ ուրեք արտաքոյ վիճակի նոցին ընկալեալ լինին 'ի տիեզերատարած վիճակի ընդհանրական կաթուղիկոսութեան Էջմիածնի մինչև ցայսօր՝ ոչ Միւռոնն, ոչ եպիսկոպոսունքն, և ոչ քա-

հանայք ձեռնադրեալք յեպիսկոպոսաց նոցին· այլ հաղիւ ուրեմն յանկիւնս ուրեք 'ի միջի կռեհ-կաց 'ի ժամանակի անանցանելի հարկաւորու-թեանց բազում խարուրեամբ։ Զեն նոքա երկոքին առաւելապատիւ քան զարքեպիսկոպոսունս ձեռնադրեցեալս 'ի Կաթուղիկոսէ Արարատեան Աթոռոյ· և ոչ բնաւ զօրեն մերձենալ ինքնակամ 'ի անօրէնութիւնս ծանր կամ թեթև իրողու-թեանց վերաբերելոց առ եկեղեցի Հայոց՝ առանց նախապատուութեանց և ընտրութեանց և վճռոյ կաթուղիկոսին Էջմիածնի, որ միայն ճանաչի որ-պէս յամենայն ազգէ Հայոց, նոյնպէս և 'ի նո-ցունց Գլուխ սրբոյ Եկեղեցւոյ Հայոց և հրա-մանատար ամենայն հոգևորականաց նորին։

Եւ ըստ այսմ երբէք չէ բաժանեալ ազգն Հայոց յերիս պատրիարգական նահանգս ըստ օրինաց քրիստոնէութեան իւրեանց· և վիճա-կաւորքն երկոքին՝ յԱղթամար կամ 'ի Սիս՝ ոչ երբէք չեն կրեալ մինչև ցայսօր զանուն Պատրի-արգութեան, այլ միայն զանունն Կաթուղիկոս՝ և այն արտաքոյ ազգական օրինաց՝ բռնակալու-թեամբ հեթանոս իշխանաց՝ յաղագս արժանաւո-րութեանց իրիք իշխանութեան իւրեանց՝ այնմ կոչմանց նոցին կամ շահեկանութեանցն 'ի նո-ցունց, և չեն ունեցեալ իւրք զհաւասարութիւն ընդ Պատրիարգին Արարատեան Աթոռոյ Էջմի-ածնի։ Այլ հաղիւ ուրեմն ըստ այլ անձնական արժանաւորութեանց իրիք իւրեանց ոմանք 'ի

նոցունց զօրեն հաւասարիլ երբեմն ընդ նախա-
պատիւ Արք Եպիսկոպոսաց ձեռնադրելոց 'ի նմա-
նէ, և աւելի ևս Կաթուղիկոսն Աղթամարայ՝ որ
յոյժ անշուք և անյարգ քան զԿաթուղիկոսն
Սսոյ՝ է որպէս արքեպիսկոպոս առաւել նուաս-
տաղոյն վիճակաւոր։

Ծանօթ. Յօդուածս այս գրուած է յերջանկայիշատակ
Հայրապետէս 'ի Քիշնև՝ իբր Բեսսարաբիոյ առաջնորդու-
թեան ժամանակ, բայց թուականն մեզ յայտնի չէ։ „Փա-
րոսի" յաջորդ տետրին մէջ մտադիր եմք տպագրել Հայրա-
պետիս մի այլ յօդուածը ևս՝ ընդ վերնագրովս. „Հայք Ցաճ-
կատանի չեն բաժանեալ երբէք յԱթոռոյ Էջմիածնի"։

Ծանօթ. Հրատարակչի։

ԿՏԱԿՕՐԷՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

'Ի Վանս-ՈՒՆԵՐՈՒՆ ՈՄԷՆԻ ԳԱՐԱՔԱՊԵՏ ԾԷՐՈՆԻ ՄԱՆՈՒԷԼ
ՎԱՐԴԱՊԵՏԻՍ ԿԷՍԻՇԽՈՆՑՈՅ ԱՌ ԼՈՍՍՈՐՉԱՐԷՆ ԳԷՐԱՊԱ-
ՊՈՒԵԼԻ ԱՂԳԷՆ ԻՄՈՅ ՀՈԳԵՈՐԱԿԱՆԱՑ Ի ԱՇԽԱՐՀԱԿԱՆԱՑ։

Որք աշխատասիրեն օրինակել և տարածել վասն դպրութեան և այլ իմաստիսի Հոգեւորականաց, վարձս բարեաց ընկալցին յԱստուծոյ։

Ստորագրեն Աստուածաբանք զԱստուած և զբնութիւնն անսխալ գործօղ. ուստի ամենայն բնութիւնք ըստ էականութեան իւրեանց ցանկան յաւիտենականն անմահութեան։ Իսկ Արարիչն բնութեանց զկնի անհնազանդութեան նախնւոյն մեր Ադամայ, ըստ սուրբ Գրոց, զատամՃռեաց յապականութիւն տարրեղենաց հողաղարձիլ հո-

զոյն· որով արարչագործեալ բնութիւնք հնազանդեալ կան 'ի նոյն բարեհաճութեան Արարչին:

Իսկ մարդս պատկեր Աստուծոյ կոչմամբն, անդադար ձկտեալ է՝ և ձկտի հեղհեղեալ նոր իմն եղանակաւ զոնէ վերսին ունիլ զառհաւատչեայ անմահութեան: Յաղագս այսորիկ յուսալի ակնկալութեամբ՝ բազումք բազմատեսակ ձեռնարկութեամբք՝ էր որ ուղղանուէր պատարագօք, որպէս Աբէլ և Աբրահամ, էր որ ընդհակառակն մատուցմամբք՝ որպէս Կայէն և որդիք Մարդկանց դիւցանուէրք, և էր որ անհեթազօտ նուաստութեամբ հոչակեալ կայ անմահացեալ 'ի միտս ամենից, և սերունդք նորա ինքնակամ ամբարտակաշինութեամբ:

Բայց այլ գերազանցքն այսր տեսակի՝ անմահմատաց ներգործութիւնն կայուն կոթող գրաւոր թողին յաշխարհի, որովք բարիք և չարք յիմանալի զգայութեան գտանին ապագայիցս անմահացեալք:

Այս եռանդ անմահութեան թափանցեալ և յիմն էութեան, թէ ոչ ըստ արժանաւոր մեծագործութեան այլոց՝ թերևս ըստ ջանից Հռովմայ Արքունի վառօդանոցն հրաձգի, ւցէ թէ գանձն իմ ունայնացուսցին հետամուտքն, զոնէ այսուհանակ կատակգրութիւն տարարաղդիս կալով յաշխարհի, իրաւարան ընթերցողք՝ վասն Աստուծոյ լենին գտատուրք ընդ միտս իւրեանց, ենթակայիս գտատգարտութեան:

Որ 'ի 1768 Տէրունական թուականի, և 'ի ՈՄԺԻՆ հայկազն ազգաբի ծնունդն իմ 'ի Կիւ-միւշխանէ յերկիր Օսմանցւոց եկեալ՝ ասանելիս ամեայ հասակաւս՝ անդ աշակերտեալ Սեբաստացի Սրբազան Յոհաննէս արքեպիսկոպոսի, և անտի գնալով յԱմասիայ քաղաք Առաջնորդութեամբ, 'ի 1796 ամին, նորին Սրբազնագործ Աջովն ձեռնադրեցայ աւելածու Տանն Աստուծոյ և Հոգևոր մշակ սիրելի Ազգին իմոյ սուրբ Լուսաւորչա-կրօնի։ Ասոյ տարաբաղդութեամբ իմով յերկ-րորդ ամի ձեռնադրութեանս՝ եհաս վախճան սրբ-բասնուն կենաց նորա։ Խորհելով զմանկահասակ պաշտօնատարութիւնն իմ, գիմեցի 'ի Արեան Պօղոս, ընկալայ 'ի Զաքարիա պատրիարգէ, և երկրորդ տարաբաղդութիւնն իմ, փութով ժա-մանեալ անդ, պակասեաց և նա յաստեաց։ 'Ի յաջորդել Դանիէլ Պատրիարգին՝ գրաւեաց 'ի պաշտօն նորա՝ ընկերակցութեամբ Սերսէս վար-դապետին Աշտարակեցւոյ։

Սակայն ապաբաղդութիւնն յաջմէ և յահեկէ իբրև զուրհանդակ արագ արագ գայ առ իս։ Զի 'ի վախճանիլ Ղուկաս Կաթուղիկոսին 'ի 1797, ընարի նոյն Սրբազանն Դանիէլ 'ի տեղի հան-գուցելոյն։ և Յովսէփ արքեպիսկոպոսն Ռուսաստանու, շորթելով զայն պատիւ առ ինքն դի-սպանի գօրութեամբ, աքսորի ընարեալ Կաթո-ղիկոսն Դանիէլ 'ի Պօղճայ ատայն։ առ որ ոչ լինելով ոք 'ի միաբանիցն Էջմիածնի, ոչն դրսեցի

վարդապետս եղէ ընդ նմին և յաքսորս ինն ամիս ժամանակաւ։ Եղատեալք անտի՝ երբ հասաք 'ի Թոխատ, եհաս համբաւ մահուան Յովսէփ Երևոյն, և վերստին միաբանք և Եղն ընտրեցին զՍրբազանն Դանիէլ։ Ճանապարհորդեցաք ընդ նմա գնալ Էջմիածին։ Զև ժամանեալ մեր 'ի Պայազիտ՝ լուաք Դաւիթ եպիսկոպոսի օծանիլն Կաթողիկոս։ Այս իմ չորրորդ տարաբաղդութիւն։

'Ի Պայազիտու սուրհանդակաւ 'ի Սրբազանէն Դանիէլէ առաքեցայ 'ի Կոստանդինուպոլ· ուր յետ բազում դարձուածոց փոխարկեալ զՊերատ Ցերմանն Դաւթի, նորոգ արքունի հրովարտակս առաք յանուն Դանիէլի, և զԹամնեցի Դրիգոր եպիսկոպոս միաբան Էջմիածնի Պատրիարգ կացուցաք 'ի Պոլիս· և վասն անկառավարութեան նոյն Դրիգորի հանեալ զնա՝ եդին զՊայպուրացի Յովհաննէս եպիսկոպոսն Պատրիարգ։ Եղև մեզ հինգերորդ տարաբաղդութիւն։

Որ այսոքիկ դարձուածք Կաթողիկոսաց և Պատրիարգաց 'ի փոխմանէ Ղուկաս Կաթողիկոսին մինչև Դանիէլ Կաթուղիկոսի յԷչմիածին, զրեալ եմ մանրամասնաբար յայնմ ժամանակի· և բաց 'ի Պատմութենէն յատուկ և „Կշիռ զրութեանց Պայպուրացի Յովհաննէս Պատրիարգի“ զրեցելոց աղագաւ արարեալ եմ յայնժամ։

'Ի 1802 թուին սուրհանդակաւ գնացաք 'ի

Պետերբուրգ բազում հարկաւոր զրուցամբք առ Եփրեմ արքեպիսկոպոսն, որ էր յայնժամ Աստրաջնորդ Ռուսաստանու մերազնէից. յորմէ 'ի 1804 ամին առաքեցաք 'ի Գրիգորիպոլ յաջորդ և հաշուապահանջ 'ի Գրիգոր եպիսկոպոսէ՝ Յովսէփ Երհոյ սպասաւորէ։ Առեալ 'ի նմանէ հինգ սընտուկ Ջնտու ապրանք՝ առաքեցաք 'ի Նորն Նախիջևան առ Եփրեմ Երհին։

'Ի 1809 թուին վախճանեալ Դանիէլ Սրբազանն, հրաւիրեցաւ յիշեալ Եփրեմ Երհին 'ի Կաթողիկոսութիւն. տարաւ և զմեզ ընդ իւր վերատին 'ի Պետերբուրգ. որ վասն իւր փոքրաւորաց զԿավալէր խնդրեաց, և մեզ խաչ շնորհեցաւ 'ի Կայսերէ։

Վերադարձաւ Հայրապետն յԱթոռն կոյս. մեք գնացեալ 'ի Գրիգորիպոլ՝ շինեցաք զԱստրաջնորդարանն վայելչապէս։ Վեցերորդ ձախորդութիւն իմ, որ հազիւ մէկ ամիս կացեալ 'ի շինուածսն իմ, Գայլակերեան Յովհաննէս եպիսկոպոս նոր Աստրաջնորդի հրամանաւն 'ի 1812 թուին գնացաք 'ի Ղրիմ, վասն 'ի Պուլղարաց յափշտակեալ Վանուց հողոյն, որ մինչ 'ի 1827 թիւն դեռ ելով 'ի դատարանն 15 ամ՝ հազիւ դատք զբաւականութիւն Ս. Խաչ վանքին Ղրիմու։ Որպէս 'ի Գրիգորիպոլ՝ նոյնպէս և 'ի Ղարասու քաղաք Ղրիմու հաստատեցաք վարժարան՝ մեր և Ռուսաց լեզուաւ հարիւրաւոր մանկանց ձրի ընթերցման։ 'Ի Ղարասու վարժելոց զուրթն մանկունս

առաքեցի 'ի Մոսկով առ ուսումնարանն Ղ. Հաղն Լաղարեանց 'ի 1819 թուին, և վաթսուն երկու հին նախնեաց զանազան հարկաւոր և դժուարագիւտ մատեանս առաքեցի նոյն համալսարանին Լաղարեանց՝ յիշատակ հոգևոր ծնողին իմոյ Յովհաննէս Արքեպիսկոպոսին։

Բայց և ասասանօր եհաս եօթներորդ տարադրութիւն· զի 'ի շարժիլ Ռուսաց սրոյն 'ի վերայ Պարսկաց, հարկադրական հրամանագրութեամբ Սրբազան Եփրեմ Կաթողիկոսին և Ներսէս արքեպիսկոպոսին 'ի 1827 թուին, թողեալ զբազմաժամանակեայ կարգաւորեալ կացութիւն և զանձնական բարեկամն իմ՝ եկի Էջմիածին, որ երեք աւուր առեցեալ էր 'ի ձեռաց Պարսից՝ զօրութեամբ Ռուսաց 'ի Դեկեմբեր ամսոյ 3։

Յորժամ Էջմիածնի միաբանք էին ցիր և ցանք, Աթոռն առանց ելուզակաց աւարառուաց, 'ի սուրբ և 'ի հարազատ բնիկ սրտացաւ պաշտօնէիցն կապտեալ կողոպտեալ յամենայն զարդուց և 'ի հարկաւոր նիւթոց ուտելեաց և զգենլեաց մնացեալ ողորմելեաց։ Ուստի Ներսէս արքեպիսկոպոսն օգուտ համարելով Աթոռոյն, ըստ որում յայնժամ Եփրեմ Կաթողիկոսն տակաւին չէր վերադարձեալ անդ, իբր Սինոդական գարդ հաստատեաց։ Յետ Սրբազան Եպիսկոպոսաց և զնուաստութիւն մեր անդամակից արար· թերևս կարճել կարասցուք զշրջայլ վնասաբերութիւնսն Աթոռոյն։

Ինքն Ներսէս արքեպիսկոպոսն Բարձրագոյն հրամանաւ գնաց 'ի Պեսսարապիայ, ուր կայ տա-կաւին։

Բայց բնաւորեալ պատահմունք Սուրբ Մխի-թարեանց վասն անձնաշահութեան, որպէս սեռու-թիւն Եղեռվպացւոյն՝ անանջատելի է 'ի նոցանէ. ջանք նոցին և մեր յանհամեմատ շաւիղս ընթանային։

Վասն այսպիսի պատճառանաց կամ էր ինձ հեռանալ 'ի խորհրդակցութեանց նոցա. նմին իրի քանիցս գրաւոր խնդրամատոյց եղէ արձակել զիս յայնպիսի կոչմանէ, թերևս ապատ լինիցիմ 'ի խղճէ վնասու Աթոռոյն։ Եւ ասա եհաս ինձ ուրթերորդ ապաբաղտութիւնն։

Վրանզի փոխանակ այնքան ասա համառօտեալ ծառայութեանց, հասակիս և կամաւոր աղերսանացս, արձակել զիս 'ի կոչմանց իւրեանց, և խուց մի շնորհել ինձ հասարակաց սեղանատանքն անցուցանել զմնացեալ կեանս իմ, 'ի Փեարուարի ամսոյն աքսորեցին զիս 'ի Խոր Վիրապ, ուր՝ այսինքն յԱթոռն՝ մնալ էի ըստ օրինի վեղարաւ, արտաքսեցայ մորթեայ գտակ փափախով։ Դ պատիւ ազգասէր երախտագիտութեան իւրեանց զրով հրատարակեցին 'ի Տփխիս և 'ի յԱժտէրխան, և նոքա՝ հոգևոր Կառավարութեանց, թէ Մ՝անուէլ Վարդապետ վարեցաք 'ի Խոր Վիրապ. մի՛ ոք գրութիւն արասցէ առ նա։

Մեք ըստ կարեաց հոգսունակեցաք զնանգա-

բեալ տեղիս և երկու սուրբ տաճարաց նոյն Խոր Վիրապի զնաչկալսն շինել, և միաբանութիւն եղբարց ժողովեալ յամայեցեալ յայն պաշտելի տեղին, որ ցարդ շքաւորեալ տեսանի ողորմութեամբն Վերին։

Ընտի յօժարութեամբ մերով գնացաք 'ի Սևան կղզին, և զմնացեալ գրեանսն և զայլ անձնական զերսն մեր անդ թողաք ուսմարաւ, թերևս աղօթակից կենաք ընդ մենացեալ Հարց և եղբարց զմնացեալ զաւուրս մեր ծառայութեամբ Աստուծոյ անցուսցուք։

Ստանօր 'ի Սևան կղզի սկիզբն արարի 'ի ծննդենէ իմմէ զպարագայս կենաց և պատահմանց օրագրութեամբ 'ի գիր աւանդել անմահութեան եռանդիւ, և կայ առ իս *)։

Եթէ ճշմարտութեան հետևողք բանասէր հարք և եղբարք՝ ընթերցմամբ զայս համառօտեալ քաղուած տարաբաղդ դիպուածոց եղկելի անձինս տարակուսեսցին, թերևս կամ Հայրենի Սուրբ Եկեղեցւոյն իմոյ Լուսաւորչակրօնի ախտաւորեալ ինչ իցեմ, կամ վեհագունից հրամայեալ պաշտօնէից վնասակար, և կամ քրիստական

*) Բարեյիշատակ վարդապետիս իր այս ինքնաձեռագիր պատմութիւնն գտանի այժմ Սրբազան Աբել արքեպիսկոպոսի մօտ և դեռ անտիպ է։ Նոյն պատմութեան 115—116 էջերում գտանւում է տուանձին մի գլուխ՝ ընդ վերնագրովս· „Զուսան և զորպէան Մասուր գպրի“, որոյ մէջ նկարագրուում է իմ հանգուցեալ ծնողիս կեանքն 'ի ծննդենէ մինչև ցամն 1833։ Ծանօթ· Հրատարակ·

յանցաւոր ոմն լցեմ. որ այսքան ալեք ապարաղ-
տութեանց շարունակեցան առ իս, ապաչեմ այն-
պիսի երկմտելոց՝ վասն Աստուծոյ՝ երբ և ուր
պատահեսցին յինէն գրեցեալ զանազան նիւթոց
այլ և այլ ժամանակի, որք են նախ՝ 'ի 1803
թուին. „'Ի վերայ ուղիղ Յունուարի 6 Ծննդեան
և Մկրտութեան Տեառն մերոյ, և նաւակատեաց
զիշերոյ Յարութեանն Քրիստոսի“, որ և ռու-
սերէն թարգմանեցեալ կայ: Եւ զսէրն իմ առ
Ս. Աչքմիածին, և՝ առ օրինաւոր Գահակալ նո-
ցա, ընթերցցին 'ի նոյն 1803 թիւ „Կշիռ գը-
րութեանց Յոհաննէս Պատրիարգին“ յինէն գրե-
ցեալն, և 'ի 1804 թուին առ Միաբանութիւնն
Վ. Հնէատիկու Ս. Ղազարու վանուցն, և 'ի 1820
ամին առ Պօղոս Պատրիարգն, ընդդէմ „Հրաւէր
սիրոյ“ տետրակին: Որ այս երեք գրութեանց օրի-
նակքն կան Աչքմիածին յաւուրցն Եփրեմ Կա-
թուղիկոսին: 'Ի 1826 „զՓորձաքար“ կոչեցեալ
տետրակն ընդդէմ ապեալ տետրակին Լևոն Փա-
փին, որովք երևին հայրենասէր ջատագովու-
թիւնք իմ: Եւ որք կամին գիտել զպահպանու-
թիւն իմ հայրենի կանոնաց և օրինապահու-
թեանց, ընթերցցին „զԼուծ նախնոյն մերոյ 'ի
վերայ պահոց առարկութեանց“: Եւ զաւելա-
պաշտութեանց փախչելն իմ 'ի „ՅԱղէտ գիտե-
լեաց“ տետրակն իմ. նաև „զԿարգ Կաթողիկո-
սացն“ որ հաւաքեցան յինէն յերից հատորոցն
Ճամչեան պատմութեանց, որք գտանին առ

Զմիւռնացի ուսումնասէրն Սուրբ Գրիգորեանն, և յայլ տեղս։ Եւ 'ի 1836 Յունուարի 25 յօրինեալն „զԳողթամի և զԹիւրակէսն“ ընդդէմ „Վարդապետութիւն հաշտութեան“ անուանեալ տետրակին տպեցելոյն 'ի Կալկաթայ 'ի 1832 ամի։ Իսկ բոլոր զընթացս կենաց իմոց ցուցանեն օրագրութիւնքն իմ որ տակաւին գրին օր ըստ օրականքն։

Արդ զի՞նչ ասասցուք յիններորդ տարաբաղտութեանս, որ Եփրեմ Կաթուղիկոսն հրաժարելով 'ի կոչմանէն, նշանակեցաւ Կարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոսն փոխանորդ նորին, և նա երդման գրով այսպէս յետ այլ բանից գրէ 'ի 1830 և 'ի Սեպտ· 20· „Վասն որոյ անկեղծ հոգւով առաջի տհաւորին Աստուծոյ դնեմ զվկայութիւն հաւատարիմ, կամելով զի նորին եղբայրական սիրով հաղորդակցութեամբն իցէք ընդ իս 'ի Թիֆլիզ“, և այլն։ Վասն այսպիսի Հայրապետական երդմնազրութեան՝ լքեալ թողաք զանդորր կեանս Սուրբ Միանձանցն Սեւանու, և եկաք 'ի Թիֆլիզ զհետ Արբազնութեան նորա։ Երբ գրութիւնք և խորհուրդք իմ օգտակարք էին նպատակի իւրոյ, երբ աջ բազուկ համարէին զիս Տփխիսեցիք 'Նորին Վեհապետութեանն· իսկ երբ եհաս բաղձալի նպատակին իւրոյ՝ Հայրապետ կոչմանն, 'ի մոռացօնս եղեն ամենայն ներկայ և անցեալ ծառայութիւնքն իմ։ Հրամանագիր եւ ինձ զաւէր ուխտատեղին Արբոյն

Սարգսի՝ որ 'ի Սէյտապատ՝ շինել և արդեամբք նորին ապրիլ, և ինքն գնաց 'ի Սուրբ Էթոռն։ Օրս կատարեցաք ըստ հրամանի յընթացս չորս ամաց, յորմէ ընկալաք վկայագիր 'ի 1835 և Յունիսի 18, համարաւ 270, յետ այլ բանից այսպէս՝ „'Ի 8 էն Սեպտ՝ 1831 ամի անցելոյ, յետ „անձնելոյ մեր Ձեզ զպահպանութիւն և զկա„ռավարութիւն Ս՝ Սարգիս ուխտատեղւոյ եկե„ղեցւոյն 'ի Թիֆլիզ՝ յանցս Սէյտապատու, և „յետ կարգելոյ մեր զՁեզ 'ի նմին եկեղեցւոջ „մինչև ցսոյն 1835 թիւ 'ի 14 Մայիսի, յայտնի „եղեն մեզ արդիւնաւոր աշխատութիւնք Ձեր „և դովութեանց արձանաւոր գործ 'ի մասին „շինութեանց և բարւոք պահպանութեանց այնր „ուխտատեղւոյ, ըստ որոյ կամելով ցուցանել „զյատուկ շնորհակալութիւն մեր առ այն, և „զկատարեալ գոհունակութիւն վասն արդիւ„նաւոր աշխատութեանց Ձերոց, տամք ձեզ զայս „Ս՝ կայական՝ մերով Հայրապետական կնքով „և ստորագրութեամբ“։ Օրայլն տեսանելի է յօրագրութեան մերոյ։

Արդ զի՞նչ այլ արդասիս բարեւաւութեանց կթեցաք այսուհնակ վկայաբանութեամբ ընդհանրական Հայրապետիս, եթէ ոչ զտասներորդ տարաբաղդութիւնս։ Զանգի նորահաս աբեղայք՝ վարձատրեցեալք եպիսկոպոսական պատուովք, զարդարեալք խաչիւ, բնակէիւ և կավալէր ասպետութեամբք՝ աշխարհական երեցփոխանք՝ ոսկեայ

մեծագիւք փառաւորեալք· մեք փոխանակ այնպիսի շնորհաց՝ յետ 40 ամ ծառայութեանց զրկեցաք և յօրական ապրուստից մերոց· զի որ յարդեանց մեր շինեալ ուխտատեղւոյ զամենանս ստանայաք Յերեցփոխէ, թէև հատեալ էին յաջորդքն զկնի հաշիւ տալոյ և 'ի նոցանէ կվիտանցի ընկալելոյն մեր 'ի Յուլիսի 1 էն ցարդ, սակայն տակաւին օրական արդիւնքն առ Յերեցփոխն ժողովէր։ Եւ նորին սրբազնակատար Վ. հհսպետութիւն 'ի Նոյեմբ· 10 փառաշուք հանդիսիւ մատնելով 'ի Տփխիս, ակն ունէաք բաց 'ի ապրուստից մերոց և այլ շնորհաց առդիպել· սակայն վրիպեցաք և յայն յուսոյ· որ 'ի 29 նոյն Նոյեմբ· զամենայն արդիւնսն յիշեալ ուխտատեղւոյ հինգամսեայ գումարեալսն միանգամայն առին 'ի պէտս իւրեանց։ Մեք 'ի 1809 թուականին 'ի Պայսերէ մեզ շնորհեցեալ զՍոլեանդեայ խաչն վաճառեցաք 'ի պիտոյս ապրուստից մերոց· միայն ցուցանեն մեզ գնալ 'ի Ղարապաղ 'ի վանս Սրբոյն Յակոբայ՝ յամայի և անծանօթ տեղի։ Թէև բազմիցս հասեալք էին աղերսագրութիւնք մեր առ ընդհանուր ազգային խնամաշատ Հայրապետն, զի ըստ կոչման և խարխուլ հասակի մերոյ՝ շնորհել մեզ օրական ապրուստ, որ յետ այսորիկ գործել ոչ կարեմ, և վասն բազմաց նախաձանօթ լինելոյս մուրանալ ամաչեմ։ Այնպիսի խնդրագործութեանցս բաւականութիւն յուսայի 'ի բարերար զալստենէ իւրն Սրբազնութեան ասա 'ի

Թիֆլիզ, և այն յոյս ըստ վերոյ գրեցելոյս 'ի դերևս ել. զի զպատարաստ նախատինսն մեր առինքն ժողովեաց. նմին իրի և 'ի 8 Դեկտ. 'ի 1835 ամի ասա 'ի Տփխիս ևս խնդրամատոյց եղէ, կամ յատկացուցանել մեզ պարէն, և կամ շնորհել պաշտօնդ գնալ վերստին 'ի Ղրիմ առ բաղմամեայ հաւատարիմ ծանօթսն մեր, ուրանօր ցաւակից կարեօք նոցին՝ անցուցից զմնացեալ կեանս իմ:

Բայց սակայն, որպէս գրի „Ամանապարհորդութիւն 'ի Լեհաստան" գրքոջ վասն աւերման Անի քաղաքի, և բարձման 'ի թագաւորութեանն 'ի Դաղկայ 'ի 38 թղթահամարին այսպէս. „Կարի վատնդաւոր է և պատճառ կործանման „մեծամեծաց՝ յորժամ իշխանաւորք հաւատան „կեղծաւորաց և հաճելի լինին նոցա շոգմոգ բանք „մարդելուզաց. մանաւանդ երբ փորձ և խոհա„կան մարդիկ ազգ առնեն հեռի կալ 'ի սուտա„կասպաս բանից, և նոքա ոչինչ լսող լինին: „Եւ որ չար ևս է, թագաւորք ոչ միայն զայն„պիսիսն ոչ հեռացուցանեն յինքեանց, այլև զսոր„հուրդ բարեխորհուրդ բարեկամաց թողեալ՝ „այնպիսի խորամանկ խորհրդականաց հետևին... „որպէս եղև Դագիկ արքայ, որ խաբեալ 'ի բանից „չարարուեստ Սարգսի՝ ոչինչ կամեցաւ այնու„հետև անսալ օգտակար ազգարարութեանց հա„ւատարիմ բարեկամաց և իշխանաւորաց. և որ „չարն է, արհամարհեալ զհաւատարիմ անձինս,

„անձնատուր եղև մանչին, և կոլծանեաց զԹա-
„գաւորութիւնն· զի գոյ և իմասանոց քուն“:

Այսպէս երևի սկիզբն, մէջն, թերևս և վախ-
ճանն Յովհաննէս Կաթողիկոսին Կարբեցւոյ· որ
վասն զեկեղեցիսն Տփխիսու և Վիճակին և զեկե-
ղեցականսն ճարտար հնարիւք իւր փոքրաւոր
Նարդիս Սահման եպիսկոպոս Արղութեանցն կո-
ղոպտելով՝ շողքորթ և շողմոդ ծպտի միմոսա-
կան կերպաւորութեամբ առաջի իւրն Արքաղնու-
թեան Վ՚եհին՝ հաճոյացմամբն զրաւեալ զախոր-
ժակ և զկամն նորին ըստ գատողական հանրա-
տարած հայրապետական իշխանութեանն ամփո-
փեալ է մի միայն 'ի հաճոյս իւր յիշեալ Արհին
Արղութեանց, ոչ զգալով Վ՚եհին՝ թէ այն զբկո-
ղութեամբ ներկայեցուցեալ գումարքն՝ խայծ ձկանց
են 'ի կարթս Արղութվին· և ինքն իբր նոքօք
պարարեալ, զայլ ամենայն ուղիղ և բարի խրա-
տատուսն 'ի բաց թողեալ անպատուութեամբ,
հոգւով Արղութեանն կենցաղավարի ընդ քա-
հանայս և ընդ վարդապետս, ևս և ընդ եպիսկո-
պոսսն, զժանտաբարոյ և զաղտաղտիսն,
զդէտ տիմար զինեվաճառ հաւծախ զորմագիրսն
և զմանկատիսն զապալայիւք սիմոնականութեամբ
յառաջ ածել 'ի պատիւ քահանայութեան, վար-
դապետութեան և եպիսկոպոսութեան, զանձն
իւրսն ըստ կարեաց բարձրացուցանել· իսկ զհայ-
բենասէր զուսումնական անձինսն, նաև զծերա-
կոյտ բազմաժամանակեայ զաշխատաւորսն, որպէս

զՎրիգոր եպիսկոպոսն Շ՝ատշատինու և զայլսն՝ անարդաբար 'ի բաց թողեալ՝ բազումք ցաւակիր հառաչանօք ելին յաշխարհէ, և այլք նոյն տառապանօք 'ի գրունս մահու հասեալ կան։

Վասն այսոցիկ ամենայնի իմ կատակագրութեան համառօտեալ զօրութիւնն է՝ օտար երկրացի պաշտօնակից հարց և եղբարց՝ մի և մի խաբիք Աթոռն գալ առանց մեծ գումար դրամոց, և երբ այնպիսի գումարօք գայք, փողն մի խնայէք, շուտով օրհնուեցէք և յետ դարձեալ՝ գնացէք, որ ձեր հետ բերած հաւատներուդ կէսն ձեր մնա ինայ։ Թէ միաբան լինելու գայք, ձեզ գրել և կարդալ հարկաւորչէ՝ մարմնաւոր գործոց յաջողակ, սուտ խօսող, շողմոզ, մարդելոյզ լերուք՝ որ պատուիք։

Ծառայ Ձեր ամենեցուն
Մանո-էլ Վարդապետ։

1836։

Ծանօթ։ Տպագրելով զայս կատակագրէն համառօտ կենսագրութիւնը արդիւնական առն՝ բարեյիշատակ Մանուէլ Վարդապետի Շահինեան Կիմիշխանեցւոյ, նորա իւրաձեռագիր օրինակէն, որ հաղորդուեցաւ մեզ մեր բանասերներից մէկէն, աւելորդ կլինի մեզ արդեօք ասել, թէ մեք կարող չեմք երաշխաւորել՝ թէ բազմավիշտ ծերունւոյ կատակի վերջին բանքն ուրքան կամ ուրչափ պատշաճում էին հանգամանաց Արբոյ Էջմիածնի առ նորա ժամանակաքն։ այս միայն մեզ յանկալի է՝ զի այսպիսի մարդոյ գրուածքն անկորուստ մնան տպագրութեամբ, որ ուշ սակաւ ստուգութիւն կարող են ընծայել մեր ազգային եկեղեցական պատմութեան։

Ծանօթ։ Հրատարակչի։

ԶՈՒՍՏՆ ԵՒ ԶՈՐՊԷՍՆ ՄՍՈՒՐ ԴՊՐԻ:

Հատուած

'Ի ՊԱՏՄՈՒԹԵՆԷ ՄԱՆՈՒԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ:

Խարեյիշատակ Մանուէլ վարդապետի Շահինեան Պիւ-միշխանեցւոյ նախընթաց պատմական յօդուածոյն մէջ յիշուեցաւ նաև նորա „Դիպուածոց Պատմութիւն", որոյ մէջ գտանւում է առանձին մի գլուխ՝ ընդ վերնագրովս „Զուսպն և ըրպեան Մուրդ դպրի": Սոյն այս համառօտ կենսագրութեան վերջին մասնը ես աւելորդ չեմ համարում 'ի մէջ բերել այս տեղ ցուցանելու համար զայն սէրը, որով կապուած էին միմեանց հետ՝ երջանկայիշատակ Մանուէլ վարդապետն և իմ հանգուցեալ ծնողս, որոց պատահեցաւ, բաղդի առանձին բերմամբն, բնակիլ առժամանակ մի Տփխիսու Ակրդապատայ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ դատթում, և մխիթարել զմիմեանս...

Յովսէփ. Հրապարակիչ:

Յու մեզ՝ որ ցանկացեալ էր լինել 'ի Ակրդապատու սուրբ Սարգիս ուխտատեղին, ընկալաք զսա (զՄսուր դպիր) առ մեզ 'ի 1831, 'ի 6 էն Սեպտեմբերի մինչև 1833 Օգոստոս 12, իբրև որդի և եղբայր, ցաւակցութեամբ իրերաց՝ մխիթարէաք զերեսաս: Յու սա ըստ Աստուածատուր շնորհացն յիւրմէ յօրինեալ „Քրիստոնէականաւ" և „Պատմութեամբ" դասասաց եղև Տփխիսու Վարժարանի մերազն մանկանց:

Բայց ըստ խոհական դատողութեանն օր ըստ օրէ կշռադատէր Տփխիսու հոգևոր կառավարչաց

Մինաս եպիսկոպոսի և Սահիան Երզուրթովի զարտուղի կիրսն որպէս առ մեզ, նոյնպէս և առ ինքն. վասնորոյ կամէր հեռանալ և անտի, որպէս և եղեն իսկ։

Սակայն ըստ օրինակի Ալեքսիանոսի կամաւոր աղքատացելոյն, յաւերժական յիշատակաց զկիր մի գրեալ, զանխուլ թողեալ 'ի սենեակ իմ, և այնպէս մեկնեալ յինէն, որ ունի օրինակ զայս.

ԳԵՐԱՊԱՏԻՒ ԳԵՐԻՄԱՍՏ ՄԱՆՈՒԷԼ ԾԱՅՐԱԳՈՑՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱԶՄԵՐԱԽՏ ՀԱՅՐ ԻՄ ՀՈԳԵՒՈՐ.

Յամ ինձ ահա՝ ո՞չ որպէս յերեկն և յեռանդն յօդաձայն լեզուախօսութեամբ զառ 'ի սրտէ խորհրդոցն խորս մերկանալ, այլ զթոթովապէս լեզուս թերութիւն՝ միջնորդաւ գրչութեանս ընուլ։

Անուր մի աղքատին թողեալ 'ի բազմաց՝ ընդ Ձերովդ միայն Ը՛այրագութ պաշտպանողութեան յարկաւ պարածածկեցաւ։ Ո՞վ կանխատեսման անօրէնութեան Ը՛մմանուէլին։ Քանի՞ քաղցրահայեաց գաան յիս Ձեր աչք՝ Ը՛սյր ամենապատուական. քանի՞ զգուալիր գորովանօք խնամարկել հաճեցայք զիմ անարժանութիւն ցայսօր ժամանակի. միթէ արիտո՞ր ինչ էր Ձեզ առ յինէն ակնկալել. քա՛ւ, ո՞չ երբէք. զե՞նչ ուրեմն, այդ իսկ էր անշուշտ զԱ՛ւետարանականին զհետ երթալ վարդապետութեան „Որովհետև արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք“ (Մտ. ԺԵ. 40)։

Խոստովանիմ Տէր բարերար՝ առաջի և մարդկան և մարդացելոյն վասն իմ Աստուծոյ· ոչ այնպէս զգուեցայ ես 'ի մօրէ՝ որպէս 'ի Հօրդ բարեզթութենէ· ոչ այնքան կաթն 'ի սահանց մօրս՝ որքան մխիթարութիւն առ 'ի Քէնջ յոգիս դիել զօրեցի· ոչ այնպէս ամփոփեաց զիմ տկարութիւն յիւրումն ծոցի Դաւն Աբրահամեան՝ որպէս առ 'ի Քէնջ վասն իմ հանդերձեալ լայնանձուին Մենարան խղճկ ցանկալի։ Այո՝ մեծ եղեն, միանդամայն և անվճարելի՝ բայց և անմոռանալի Քերոց առ իս դերմարդկային բարեաց երախտիք, զորս մոռանալ՝ է մոռանալ զԱստուած ամենաբարի։

Սէրն, զոհութն, խնամքն Հայրական՝ զորս ցուցիք ինձ 'ի դէպս իւրաքանչիւր, ցյեսին շունչ կենաց պարտաւորեն զիս աղօթող լինել միշտ վասն երկարութեան արդիւնավաստակ կենաց Քերոց, և խնդրել զյաւիտենական բարեացն փոխարինութիւն յԱյնմանէ՝ որ արբուցանողին իսկ բաժակ մի ջուր ցուրտ՝ խոստացաւ ոչ կորուսանել զվարձս։ Նա է՝ որ աղաղակէ· „Դաղցեալ էի՝ և ետուք ինձ ուտել· ծարաւ՝ և արբուցիք· մերկ՝ և զգեցուցիք“ (Մատթ· ԻԵ· 35)։

Պացցէ մնասցէ այս արձան յիշատակի երախտապարտութեան իմոյ առ Տէրդ՝ 'ի ժամն և 'ի ժամանակս։ Լեղու իմ ծանրաշարժ՝ այլ ոչ և դրիչս, զի նման է լեզուի ճարտար խօսողի, որպէս և Մարգարէին լեզու՝ դրչի արագագիր դպրի։

Կացէք բարեաւ, մնացէք խաղաղութեամբ Աստուծոյ իմ՝ Հայր արդիւնաշատ՝ հանդերձ եղելովքն ընդ Ձեզ եղբարքք և որդւովք։

Ես եմ
Ցոգներախտ Հայրութեան Ձերում
Նուաստ ծառայ և յետին որդեակ
Մուսուր Գրիգորեան Զմիւռնացի։

Ի 12 Օգոստոսի 1833։
Ի Տփխիս։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա։

„Համառօտ եկեղեցական Պատմութիւն նոր ուխտի, ընդ-կարգեան Ուսուցչաբանների համար, աշխատասի-րութիւն առաջ հանանոյի Մանդինեանց։ 1870։ Ի Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Էջմիածնի։ հրամանաւ Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց Գէորգայ, Դ։“

Այս մատեանս շատ անգամ յիշուած է մեր խմբագրի մէջ, ուստի աւելորդ չեմք համարում նի մէջ բերել այս տեղ քանի մի նկատողութիւնք այն անճշդութեանց և սխալանաց վերայ, որք գտանւում են այս գրքիս մէջ, քաղելով յայն ընդարձակ քննաբանական յօդուածէն, որ ուղարկուած է մեզ հրատարակութեան համար։

1։ Տեարակի սկզբին՝ գուցէ իբրև ներածութիւն պատմութեան Հայասատանեայց եկեղեցւոյ՝ դրել է Հ։ Մանդինեանցը ընդհանուր տեղեկութիւն քրիստոնէական եկեղեցւոյ արտաքին և ներքին հանգամանաց վերայ առաջին

երեք կամ չորս դարերում, և այսու առաւել ևս նշմարուում են պատուելի հեղինակի վրիպակները և սխալմունքը· վասն զի նիւթապէս հետևել է նա ռուս լեզուաւ հրատարակուած եկեղեցական պատմութեանց(°), և լաւ չհասկանալով բընագրերը անչափ սխալներով թարգմանել է նոցա գրուածքը։ Օրինակ· էջ 1, ասում է մեր Փրկչին համար՝ թէ „Եկեղեցին բովանդակեց իւր մէջ, ինքն լինելով հիմն և գլուխ, և անբաժան նորամէն մինչև աշխարհի վերջ“։ Արդեօք ի՞նչ է իմանում՝ Հ· Մանդինեանցը ասելով՝ „եկեղեցին բովանդակեց իւր մէջ“։ Մի գուցէ կամենում լինի ասել այսպիսի ինչ, որպէս թէ եկեղեցին բովանդակի կամ պարունակի Քրիստոսի մէջ, և թէ կարելի է հետևաբար եկեղեցին անուանել Քրիստոս, կամ Քրիստոսը-եկեղեցի։

2· Յետոյ շարունակում է· „Իսկ համբարձման ժամանակ յանձնեց առաքելոց եկեղեցւոյ շինութիւնը և տարածելը, իւր էակից և փառակից սուրբ Հոգւոյ առաջնորդութեամբը, զոր խոստացաւ ուղարկել ինն օրէն յետոյ, որ զատկէն կանէ յիսուն օր“։ Հարցնել պէտք է արդոյ հեղինակին՝ թէ ո՞ր խօսքով, կամ ո՞րպէս արդեօք, կամ ո՞ր ուրիշ ժամանակին, յանձնեց Քրիստոս առաքելոց իւր Համբառնալուց եկեղեցւոյ շինութիւնը, մինչդեռ մենք գիտենք որ Քրիստոս իւր վերայ ասաց՝ „Ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ“։ Դարձեալ՝ թէ ե՞րբ խոստացաւ նա Առաքելոց ուղարկել Հոգին Սուրբ ինն օրէն յետոյ, մինչդեռ աւետարանի մէջ ասած է անորոշ „Մինչև զգենուցուք զօրութիւն ՝ի բարձանց“։ Ո՛չ ապաքէն պէտք էր ասել՝ խոստացաւ··· և ինն օրէն յետոյ ուղարկեց։

3· Էջ 2, ասում է· „Պետրոս··· Յովհաննիսի հետ բժշկելով մօրէն ծնած կաղը, միւս օրը քարոզութեամբ դարձրեց 5000 հոգի“։ Այսպիսի է ահա՛ Մանդինեանց Հոր դպրոցական լեզուի ոճը··· „մօրէն ծնած կաղը“։ Կարելի է նոյն դպրոցական ոճի ճաշակ համարել և այս վերնագիրը երրորդ յօդուածոյ՝ „Եկեղեցին բաղկացած Հրէաներէն Պաղեստինայի և Սիրիայի մէջ“։ Թողնենք այդպիսի օտարախօրթ դարձուածոյ տգեղութիւնը, ով չէ՞ տեսնում որ եթէ հեղինակը հմուտ լիներ հին պատմութեան և աշխարհագրութեան, չէր ասի Պաղեստինա և Սիրիա (ինչպէս որ իւր գրոց մէջ շատ տեղ ասում է)· այլ կասէր Պաղեստին կամ Հրէաստան, և Ասորիք կամ երկիր Ասորւոց։

4· Նոյն յօդուածի մէջ ասում է· „Փիլիպպոս սարկաւագ մկրտեց Սամարացիքը, իսկ Պետրոս և Յովհաննէս ուղարկեց Երուսաղէմի եկեղեցին այնտեղ, որք աղօթք անելով և ձեռք դնելով նոցա վերան ստացան Հոգւոյն Սրբոյ շնորհքը“։ Կարելի՞ կլինի արդեօք աշակերտաց իմանալ այս խօսքերից, նախ՝ թէ ո՞վ է ուղարկեց բային տերը՝ Փիլիպպոս թէ եկեղեցին· երկրորդ՝ թէ ո՞յք են աղօթողքն և ձեռս դնողքը և ո՞յք Հոգւոյն սրբոյ շնորհք ստացողք· առաքեա՞լք թէ Սամարացիք։ Յետոյ շարունակում է· „Նոյնպէս և ուրիշները ևս հաստատեցին եկեղեցին Դամասկոսում“։ Ո՞յք են ուրիշները՝ Սամարացի՞ք թէ առաքեալք։

5· Նոյն էջ· „Սաստիկ նախանձախնդիր Մովսիսական օրէնքներին և հալածող Քրիստոսի եկեղեցին“։ Բանից դարձուածքը շփոթ և երկբայական է, մինչդեռ հարկաւոր էր ասել „հալածող Քրիստոսի եկեղեցւոյ“։

6· Էջ 3· „Տիրոջ հրամանաւ կանգնեցաւ“։ Անհարազատ է թարգմանութիւնը տեր բառի, որ մեզ է հեղինակի մտքի մէջ Հայ Պրոտեստանտ թարգմանութիւններից, մինչդեռ մեր Հայոց լեզուում ասում է· „Տեառն մերոյ կամ Փրկչին կամ Քրիստոսի“ և այլն։

7· Նոյն էջ, ասում է· „Պետրոս առաքեալը լինելով Յոպպէ քաղաքում առանձնակի աղօթելու ժամանակ եղաւ նորան Աստուածային յայտնութիւն հեթանոսները կանչելու համար դէպի քրիստոնէական հաւատը երկնքէն կախուած կտաւէ զամբիւղն օրինակով, որ լիքն էր զանազան գազաններով, անասուններով և թռչուններով, երկնային ձայնն հրամայեց Պետրոսին մորթել զնոսա և ուտել“։ Թէ ի՞նչ է արդեօք երկնքէն կախուած կտաւէ զամբիւղն օրինակով, մեզ չէ՛ յայտնի· բայց կարծում եմք՝ թէև ամենայն ընթերցողաց դժուարին է իմանալ մեզին յօդուածոյ խօսքերից՝ թէ արդեօք երկնային ձայնն որի՞ն կամ ի՞նչ հրամայեց Պետրոսին՝ մորթել և ուտել հեթանոսների՞ն թէ գազաններին։

8· Էջ 5· Ինն երորդ յօդուածի մակագիրն է այս· „Միւս առաքելոց հիմնած եկեղեցիքն“, և յետոյ ասում է· „Բարթուղիմէոս (քարոզեց) Հայաստանում, Մարիամ Մագդալենացին Հռոմում“։ Բայց թէ ի՞նչ տեղից է առել նա այդ բանը, որ Մագդալենացուոյն Հռովմայ եկեղեցւոյ հիմնադիր է շինում, հակառակ ամենայն քրիստոնէից աւանդութեան

(բայց 'ի Պրոտեստանտից) որ Պօղոսին և Պետրոսին Հռովմայ եկեղեցւոյ առաջին քարոզիչ և հիմնադիր են ճանաչում, ցանկալի կլիներ որ մեր եկեղեցական պատմութեան հեղինակը հաստատ փաստերով ցոյց տար այդ։ Մենք գիտենք որ մեր և Յունաց յայսմաւուրքը նոյնպէս և ճառընտիրը պատմում են՝ թէ Մաղդաղենացին գնացել է Եփեսոս և այն տեղ վախճանուել· իսկ Լատինք անստոյգ աւանդութիւն ունին իբր թէ դնացած լինի Գաղղիոյ Ծովեղերեայ Մարսիլիա քաղաքը, այն տեղ քարոզած և վախճանուած· իսկ թէ Հռովմ դնացած և այն տեղ քարոզած ո՛չ ոք չէ՛ պատմում, և Հռովմայ Պապերը կարծեմ թէ երբէք իմացած չլինին՝ թէ ինքեանք յաջորդ լինին Մագդաղենացւոյն։

9· Ոչն էջ· Ցիշելով Երուսաղէմի վերջին կործանումն՝ Յովսէպոսի խօսքը տանում է իւր համար իբրև ստոյգ և անտարակուսելի ճշմարտութիւն, և մէջ է բերում անստոյգ և պառաւական հրաշքները և նշանները, որոց չորրորդն աւելի ծիծաղելի պէտք է երևայ մինչև անդամ ստորին դասատանց աշակերտաց ևս, որպէս ասում է նա· „Հրէից անկման, ինչպէս կասէ Յովսէպոս Հրէայ պատմաբանը, նախընթաց եղան զանազան հրաշքներ և նշաններ, որք են· Ա· Մարգարէութիւն մէկ Յեսու անունով մարդու։ Բ· Գիսաւոր աստղն։ Գ· Լոյսն, ցերեկուայ նման տեսնվում էր գիշերով տաճարում։ Դ· Գառնի ծընուիլը կովէն, որ տարել էին զոհի սեղանը բաղարջակերաց տօնին“, և այլն։

10· Ոչ 6· ասում է· „Հրէայք դուրս գալով համբերութենէ դատաւորներու չարագործութեամբ, մանաւանդ վերջին դատաւոր Քլորիոսի, և գոլով զրգռուած Զիլոգներէն, ապստամբեցան ընդդէմ Հռովմայեցւոց և նոյն իսկ ժամանակին թուլացրին զենքեանս ներքին երկպառակութեամբ“։ Այս պարբերութեանս բառական թարգմանութիւն լինին 'ի ռուսաց լեզուէ ակներև տեսնուում է· նախ՝ ռուսաց злоупотребленіе բառը, որ՝ նշանակէ անիրաւութիւն, նա թարգմանել է չարագործութիւն· երկրորդ՝ վերջին դատաւորի անունն թարգմանել է Քլորիոս՝ փոխանակ ասելու Փլորոս· երրորդ՝ յունական անունն Զիլօթիս, ռուս բնագրի մէջ զիլօթ գրածը չէ՛ թարգմանել որ թարգմանած է մեղանում նախանձայոյզ բառով, ինքն ևս աւելի այլայլելով գրել է Զիլոգներէն· և չորրորդ ռուսերէն „и въ тоже время“ թարգմանութիւնն „և նոյն իսկ ժամանակին“։

11· Նոյն էջ· Որպէս և շատ տեղ իւր գրուածոց մէջ մեր հեղինակը դործ է ածում թշուառութիւն բառը, ասելով՝ „թշուառութիւն առաքելական եկեղեցւոյ“, „թշուառութիւն եկեղեցւոյ“, և այլն, որով յայտնում է՝ թէ չդիտէ այդ բառի զօրութիւնը, որ երանութիւն բառի հակառակն է, և որպէս երանութիւնը ամենայն բարեաց բովանդակութիւն է, նոյնպէս և թշուառութիւնը ամենայն չարեաց բովանդակութիւն է· ապա և չէ օրէնք երբէք, մանաւանդ եկեղեցւոյ պաշտօնէին, Քրիստոսի եկեղեցին թշուառ կոչել, որ մինչև անդամ իւր հալածանաց և աղետալի տառապանաց մէջ՝ միշտ երանելի է, և ոչ երբէք թշուառ։

12· Աւյսպիսի է և հայկական բառից տգիտութիւնը, որով 8 երորդ էջումը մեր հեղինակը Սիմոն մոգին կոչում է „նահապետ աղանդաւորներու“, փոխանակ ասելու „Գլուխ աղանդապետաց“, կամ գոնեայ „Նախահայր աղանդաւորաց“։ Նոյնպէս նոյնտեղը ասում է· „Երբ տեսաւ (Սիմոն մոգը) թէ Պետրոս և Յովհաննէս դրոշմելով տալիս են Հոգին սուրբ, կամեցաւ կաշառքով առնուլ այն իշխանութիւնը, այլ երբ որ արհամարհեցին զինքն, ուրացաւ հաւատքը և սկսաւ մոլորութիւնը քարոզել“։ Ասում է „դրոշմելով“, փոխանակ ասելու „մկրտուածների վերայ ձեռքը դնելով“։ Նոյնպէս փոխանակ ասելու մերժեցին կամ յանդիմանեցին ասում է „արհամարհեցին“։

13· Էջ 10, ասում է· „Երրորդ դարում տալիս էին մկրտուածի ձեռքին մեղրամոմ՝ ի նշան հոդևոր լուսաւորութեան, և համբուրում էին՝ Քրիստոսի հաշտութեան նշան, և գլխին կապում էին պսակ, որ մենք ասում ենք նարօտ յաղթութեան նշան“։ Թէպէտև հաւանական է՝ թէ մկրտութեան խորհրդոյ գլխաւոր արարութիւնքը առաքելադիրք են, և կամ առաքելական հարդ սահմանած, բայց չդիտենք թէ այդ եկեղեցական պատմութեան հեղինակը ի՞նչ տեղից առած վճռում է՝ թէ երրորդ դարու քրիստոնեայք այդ ամենը կատարում էին, իբր թէ ոչ առաջ և ոչ յետոյ։ Նոյնպէս ծաղրական է յոյժ ասելն „մեղրամոմ“ (որ է воскъ), փոխանակ ասելու մոմեղէն, մոմ, և յունական բառիւ կերոն։

14· Էջ 11· „Ապաշխարութեան խորհուրդը կատարվում էր հրապարակական խոստովանութեամբ, և յետոյ սահմանեցաւ առանձնական մէկ քահանայի մօտ“։ Ի՞նչ արդեօք

կամ՝ ասել կամ որ ժամանակի համար պէտք է իմանալ բառս յեթոյ· գիտենք որ առանձնական խոստովանութիւնը Առաքեալք սահմանեցին։ Յետոյ ասում է· „Ապաշխարութեան արտաքին նշաններն էին ծնրադրութիւնը, դեռնի վերայ ընկնել, արտասունք, պահք, աղօթք“։ Ի՞նչ է իմանում ասելով դեռնի վերայ ընկնել· եթէ կամենում է ասել դեռնատարած մնալ, կարծեմք թէ դեռնի վերայ ընկնելը այն միտքը չուի։ Նոյնպէս ասում է· „Պատկի համար պահանջվում էր փեսայի և հարսի փոխադարձ համաձայնութիւնը, և ապա եկեղեցւոյ ներկայութեամբ օրհնում էր նոցա պատկը եպիսկոպոսը կամ քահանայն“։ Արդեօք ի՞նչպէս պէտք է հասկացած եկեղեցւոյ ներկայութեամբ ասելը· փեսայի և հարսի ներկայանալը եկեղեցւոյ մէջ, թէ՝ ամբողջ եկեղեցին ներկայ գտնուիլը պատկի օրհնութեան ժամանակը։ Նոյն յօդուածի մէջ ռուսայ богослуженіе բառը թարգմանում է Աստուածպաշտութիւն, փոխանակ թարգմանելոյ կարգ Աստուածպաշտութեան, ժամակարգութիւն, կարգաւորութիւն հասարակայ աղօթից, և այլն։

15· ՅՀ 12· Նախնի քրիստոնէից թաղման համար ասում է· „Միւս օրը կանայք գնում էին դերեզմանի վերայ, զոր կոչում ենք այդ“. երևում է որ առաջին օրը կանայք չէին գնում թաղմանը, կամ միւս օր միայն կանայք էին գնում դերեզմանը այդին։ Ինքնահնար մտածութիւն։

16· ՅՀ 13, ասում է· „Աստուած մի է ըստ Աստուածութեան, բայց երեք անձինք Հայր, Որդի և Հոգի սուրբ, և սորա ապացուցութիւնը է մկրտութիւնն, որ Յիսուսի Քրիստոսի պատուելով մկրտում էին երեխայն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ“։ Զգիտենք թէ ի՞նչ է կամենում ասել այս խօսքով, թէ մկրտութիւնն է ապացուցութիւն եռանձնեայ Աստուածութեան, և առաւել մեզ անիմանալի է ասելն· „Յի՛ Քի՛ պատուելով մկրտում էին երեխայն“։

17· ՅՀ 14· Նախնի հաւատացելոց ողջախոհութեան վերայ խօսելուց ասում է· „Աւետարանի պատուերը — ծուռը աչքով նայելը մեծ զգուշութեամբ էին պահում“։ Գուցէ կամենում լինի ասել՝ ծուռը աչքով չնայելը, ապա թէ ո՛չ հակառակը կիմացուի աւետարանական պատուիրանքին։

18· ՅՀ 16· „Քրիստոնէութեան հայածանքի ժամանակը շատերը վարում էին առանձնակի կեանք, որը կոչվում էին Ասկէտներ, այսինքն խստակրօն կամ անձնուրացներ, սա-

կայն անապատական կեանքը սկսաւ Հռովմէական տերութեան մէջ երրորդ դարում և այն Եգիպտոսի աշխարհում, որի հիմնադիրն է Պօղոս Թեբայեցի»։ Երևի թէ անգէտ է հեղինակը՝ պատճառ որ յունական բառը ասկէտ, որ մտել է ռուսաց լեզուումը, մեզանում չէ լսուած, և սովորաբար թարգմանած է ճգնաւոր բառով։ Զգիտենք թէ ինչէ՞ է ասում՝ թէ անապատական կեանքը սկսաւ Հռովմէական տերութեան մէջ. գուցէ կամենում լինի ասել՝ թէ Եգիպտոս այն ժամանակ Հռովմայ կայսերաց իշխանութեան ներքոյ էր։ Միայն այս էլ չմոռանանք, որ մեր հեղինակը իւր գրքի 20 երեսին ասում է «Նախապէս՝ Հայաստանի մէջ հիմնեցաւ անապատական կեանքն»։ Ո՞րն է արդեօք ստոյգը։

19. ԼՀ 19. «Հայաստանի առաջին լուսաւորութիւնը և անկումն»։ Բառս անկումն եթէ այս տեղ նշանակում է կործանումն, հակառակ է ճշմարտութեան. իսկ եթէ նուաղումն, ոչ ապաքէն պէտք էր ասէր նուազումն։

20. ԼՀ 21. «...շինեց կուսանոցի վանք, սուրբ Աստուածածնայ անունով, ուր դրաւ նորա... պատկերը, և կոչեցաւ Հոգեաց վանք»։ Ի՞նչ ասել է կուսանոցի վանք. գուցէ ասել կամի կուսանաց վանք կամ կուսանոց. և թէ ինչպէս կիմացուի թէ այն է կուսանոցը, որ կոչուեցաւ Հոգեաց վանք։

21. Նոյն էջ. «Երրորդ դարում նահատակեցան Սեբաստիայի և Բասենի քաղաքներում Եւստրատիոսեան հինգ վկայքը»։ Զգիտենք՝ թէ հեղինակի ասած Բասենի քաղաքը որն է, և թէ Եւստրատիոսեանք չորրորդ դարու սկիզբն նահատակուեցան և ոչ երրորդ դարում (305 թուին)։

22. ԼՀ 22. «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը էր հեթանոս Անակ նախարարի Սուրէն Պահլաւի ցեղէն, և Արշակունի թագաւորաց ազգէն ծնաւ Վաղարշապատ քաղաքում»։ Ահա՛ ձեզ բառից խառնիխուռն շարադրութիւն երկոտող գրուածքի մէջ, ուր հեթանոս բառը յայտնի չէ թէ Անակի մակիրը լինի, և կարելի չէ աշակերտաց իմանալ՝ թէ Սուրէնը Անակ նախարարի որդին չէ կամ թէ Սուրէն Պահլաւն մի և նոյն անձին անունն է. և ապա յարակցում է նա՝ «յետոյ բաժանեցաւ իւր կին Մարիամէն, ինքն գնաց Հռոմ Տրդատի մօտ, որի հայրը խոսրով թագաւորին սպանել էր իւր Անակ հայրը, որպէս զի հօր պարքը լցընէ ծառայելով որդւոյն»։ Եթէ աշակերտներից կամ կարդացողներից մէկը տեղեակ չլինի այս պատմութեանը՝ չգիտենք թէ ի՞նչ-

պէս կարող է իմանալ այդ գրուածից թէ ո՞վ ումը սպանեց, կամ ո՞վ որոյ հօր պարտքը պէտք է լցուցանէ և ո՞մ որդւոյն կամի ծառայել։

23· Չ 25· Լուսաւորչի գէտիլ՝ երաշ է կոչում մեր պատմիչը, որպէս և Կեսարիոյ եպիսկոպոս Ղեոնդիոսին կոչում է յաջորդ Թադէոս առաքելոյ, փոխանակ ասելու Թադէոսի յաջորդութիւնից կամ մէկը նորա յաջորդներից։

24· Չ 27· „Սուրբն Մեսրովբ դտաւ կամ հնարեց Հայերէն այբուբենի պակաս նշանագիրերը, այսինքն եօթն ձայնաւոր տառերը“։ Նախ հակառակ է այս ազգիս բոլոր պատմաբանից, որպէս որ շատերը ապացուցել են. երկրորդ սուտ է ասելը՝ թէ պակաս նշանագրերը ձայնաւոր տառերն են։ Խորենացին այդպիսի մի բան չէ՛ ասել, և եթէ մի որ և իցէ օրինակի մէջ միայն գծագրած երևան եօթն ձայնաւորների ձևերը՝ ա, ե, է, և այլն, չէ՛ կարելի այնտեղից հետևեցուցանել՝ թէ Մեսրովբը միայն եօթն ձայնաւոր տառերն է հնարել. ոչինչ դժուարութիւն չէր նորա համար եօթն ձայնաւոր տառերի հնարիլը, երբ դտանուում էին արդէն յունարէն այբուբենից մէջ։

25· Չ 28· „Վռամ··· զբկեց զԱրտաշէսն թագաւորութենէ և սուրբ Սահակը կաթուղիկոսութենէ, և երկու իշխանութիւնքը յափշտակեց ինքը“։ Մի թէ կամենում է ասել վերջին խօսքերովը՝ թէ Վռամը այնուհետև թագաւոր և կաթուղիկոս եղաւ ազգիս։

26· Չ 35· Բրքիշոյ և Շմուել երկու անարժան կաթուղիկոսաց վերայ խօսելով՝ ասում է. „որք պղծեցին Կաթուղիկոսարանի Սրբութիւնը լցնելով պոռնիկ կանայք“, մինչդեռ Խորենացին և ուրիշ պատմաբանք նոցա անկարգութիւնը աւելի պարկեշտ կերպով են յիշում, յիշատակելով կանայս տնկալուզս կամ տանտիկնիայս, և ո՛չ թէ կաթուղիկոսաբանը պոռնկանոց շինեցին. բայց երբեմն կրօնագիտութեան ուսուցիչը, որպէս այս տեղ՝ նոյնպէս իւր պատմութեան միւս տեղերում բնաւ չէ՛ խղճահարում դեռահասակ աշակերտաց միտքը պղտորել յիշատակելով անբարոյական և դայթակղեցուցիչ անցքերը, որք տեղի կարող են ունենալ միմիայն ուսումնական երկասիրութեանց մէջ, այլ ո՛չ դասատեսարների մէջ։

27· Չ 42· Սկսում է պատմել Եղը կաթուղիկոսի միաբանութեան անցքը Յունաց եկեղեցւոյ հետ, նոյն հակառա-

կասէր ոգւով՝ որով պատուելի հեղինակը լքցրել է իւր տեսրակը ծայրէ 'ի ծայր. իսկ թէ որքան վնասակար է աշակերտաց սրտի մէջ սնուցանել մոլեկրօնութիւնը սուտ աղգասիրութեան անունով՝ ասելը աւելորդ է։

28· Լ՚Ջ 57· Խորենացւոյ պատմութեան վերայ խօսելով՝ Հ· Մանդինեանցը ասում է. „սորա ոճն է բուն հայկաբանական“, մինչդեռ աշակերտք եւ գիտեն որ աւելի հելլենական է քան թէ հայկաբանական։

29· Լ՚Ջ 61· Ղազար Փարպեցւոյ վերայ խօսելուց առաջ է բերել մանրամասն հանդամանքներով թշնամեաց զրպարտութիւնները նորա վերայ, և ասում է. „Դ՚ խաւոր սուտ կարծիքները սոքա են. Ա· Ղազարն ասում է պոռնկութիւնը մեղք չէ։ Բ· Ղազարն աղանդաւոր է։ Գ· Ղազարն պիղծ և չարագործ է“, և այլն։ Թէ ի՞նչ օգուտ է համարել եկեղեցական պատմութեան հեղինակը աշակերտաց համար այսպիսի զրպարտութիւնները արձանագրելով իւր համառօտ տեսրակի մէջ, ինքն գիտէ և ինքն է զգում՝ իւր ճաշակը։

30· Լ՚Ջ 81· „Ներսէս Լամբրոնացի, որ մէկն էր այն թղթի ձեռնագրողներէն, և որի վերայ կասկածաւոր (թուի կասկածոտ) էին թէ հակամիտ (կարդայ՝ հակամէտ) է դէպի Լատինականութիւն և Յունականութիւն, և Լեւոն սպառնալեաց թուղթ գրեց Լամբրոնացւոյ վերայ՝ եթէ հեռի չկենայ նորաձեւութենէ. և ստանում է պատասխանի գրած անվեհեր հոգւով, որի մէջ շատ անվայելուչ անարգական բառեր է գործածում՝ իւր աստիճանակիցներու դէմ, և ափսոս որ Տուտէ Որդւոյ գրածի օրինակը չունիմք“։ Աւաղ քեզ Լամբրոնացի ում՝ դատաքննութեան ներքոյ ես ընկել։ Զարմանալին այս է, որ Հ· Մանդինեանց որպէս ջատագով և կողմնակից այն ժամանակուայ ոմանց Հաղբատեցւոյ և Սանահնեցւոյ և հետեւող նոցա կոյր մոլեկրօնութեանը, վստահանում է այդպէս արհամարհանօք խօսել Լամբրոնացւոյ վերայ և յանդգնում է պախարակել նորա սքանչելի նամակը առ Լեւոն թագաւորը՝ նորանով որ անվայելուչ՝ անարգական բառեր է գործածում որպէս թէ իւր աստիճանակիցներու դէմ։ Ապա ուրեմն ինքն Հ· Մանդինեանցը ինչպէս չէ ամաչել իւր տեսրակի մէջ՝ պախարակել, բամբասել և զրպարտել շատ անարդական և անվայելուչ բառերով և ստայօդ պատմութիւններով ոչ թէ իւր աստիճանակիցներին միայն, այլ և վարդապետաց, եպիսկո-

պոսաց, պատրիարգաց և կաթուղիկոսաց են, որոց յիշատակը պատուական է ազգի համար և պատուելի կլինի յաւիտեան։

31· ԼՀ 98· Դարձեալ Լամբրոնացւոյ վերայ խօսելով՝ ասում է· „Նա Հռոմկլայի ժողովի մէջ խօսեցաւ ճառ ջատագովելով յունական եկեղեցին ըստ ամենայն մասանց“, որ սուտ է։ Լամբրոնացին չէ յիշում յունաց եկեղեցւոյ դաւանութեան և արարողութեան ամենայն մասունքները, այլ միայն նոցա դաւանութեան էական մասունքները։

32· ԼՀ 123· Ղազար կաթուղիկոսի ցահկեցւոյ վերայ խօսելով՝ ասում է· „Նոյնպիսի դժուութիւն ընկաւ նորա և Աստապատի Գէթալի խանի մէջ, բայց լաւ ծեծ կերաւ Թահմազ Շահէն, կողոպտեցաւ կայքէն և զրկեցաւ կաթուղիկոսութենէ“։ Չգիտենք թէ մեր պատմաբանը ինչի համար այդպիսի դուարճութիւն է ցոյց տալի իւր կաթուղիկոսի ցաւալի դանդաղութեան վերայ· դուցէ ցանկանում է նա որ աշակերտք ևս իմանան՝ թէ Հայոց Կաթողիկոսք ևս կարող են լաւ ծեծ ուտել··· Թող պատկառէր դոնեայ Կաթոլիկ Չամչեանից, որ միևնոյն անցքը առաւել արտաքսութեամբ է պատմում քան թէ դուարճութեամբ (հատ· Գ· էջ 822)։

33· ԼՀ 126· Կարբեցի Յովհաննէս կաթուղիկոսի համար ասում է· „Նա եպիսկոպոս ժամանակը դնաց մեռոնակիր նուիրակ Աղուանից աշխարհը, և հասնելով Նուխի դաւառի Վարդաշէն գիւղը՝ սկսաւ պահանջել մեռոնադրամ առաւել քան զնոցա կարողութիւնը. այսինքն մեռոնը դրամով ծախել։ Վարդաշէնցիք՝ որք մնացորդք են Ուտէացւոց, և ամենևին հայերէն չգիտեն, տեսնելով այնպիսի անակնուելի վաճառականութիւնը, ուստի շատերը աղատելու համար իւրեանց անձինքը այնպիսի անսովոր հարկէն՝ միացան Ռուսաց եկեղեցւոյ հետ և ընկաւ մեծ խռովութիւն և հերձուած դիւղականաց մէջ, և այժմ ևս շարունակվում է“։ Ի՞նչ տեղից է արդեօք հնարել այսպիսի չլսուած զրպարտութիւնը Յովհաննէս կաթուղիկոսի վերայ, և համարձակուում է եկեղեցական պատմութեան ուսուցիչը դասախօսել աշակերտաց այդպիսի բամբասանքները։ Եթէ կամաւոր նուէրը հաւաքելը ժողովուրդից, որ վարդապետը և եպիսկոպոսը տեղ տեղ մեռոն տանելուց ժողովում են՝ և եթէ այն կամաւոր նուէրը մեռոնի վաճառումն է համարում, ուրեմն մեր

ամէն նուիրակներն այնպիսի մեռոնավաճառ պիտի կոչէինք։ Կրկնում եմք մեր խօսքը՝ թէ այսպիսի անդքերի նկարագրութիւնը տեղի կարող են ունենալ, որպէս քննութիւնք, միայն պատմական և ուսումնական աշխատասիրութեանց մէջ, և ոչ երբէք դասատետրերի մէջ։

34. Նոյն երեսին, խօսելով մեծանուն Ներսէս Ե. Կաթուղիկոսի վերայ, որոյ յիշատակը այնքան մեծարելի և սիրելի է ազգիս, աշխատում է ամէն կողմից պախարակել նորա գործքերը և վարչութիւնը, այնպէս որ անծանօթք ստուգութեանը, Մանդինեանցի տետրակի մէջ կարդալուց Ներսիսի վարքը և գործքերը, պէտք է չարաչար դայթակղուին և մոլորուին։

35. Իւր տետրի վերջին երեսներում Հ. Մանդինեանցը՝ Աժդարխանի առաջնորդ Սերովբէ արքեպիսկոպոսն կոչում է Լիբանանու միաբան, մինչդեռ նա պրոպագանդայի աշակերտներից մէկն էր, իսկ Պալանթեան Միքայէլ արքեպիսկոպոսի համար ասում է. „Մխիթարեան միաբանութենէ վերադարձեալ Հայոց եկեղեցւոյ ծոցը“, մինչդեռ նա ոչ թէ Մխիթարեան, այլ Լիբանանու վանքի միաբան էր։

Այս ամենայն անճշդութիւններից և սխալանքներից յետոյ, որք դտանւում են Մանդինեանց Հօր „Եկեղեցական Պատմութեան“ մէջ, յուսով եմք՝ թէ ընթերցողք ինքեանք առանց դժուարութեան կվճռեն՝ թէ նոյն դասատետրն որքան օգտակար և կամ որքան վնասակար կարող է լինել Հայկազնեայ մանկանց համար, և թէ որքան վայել էր նորան ելանել Յէջմիածնական տպարանէն, և մանաւանդ Վեհափառ Կաթուղիկոսի թոյլտուութեամբ։ Ուստի մեք բնաւին սխալուած չէինք ասելով „Փաբոռ“ առաջին տետրին մէջ (յէջ 36)՝ թէ „այդ մատեանդ մշանջենաւոր սև բիծ մնալու է Յէջմիածնական տպարանի պատմութեանը մէջ“։

Բ·

Ջամբռ, համաձողովեցեալ և շարադրեցեալ 'ի Սիմեոնէ կաթողիկոսէ Երևանեցւոյ· 'ի Վաղարշապատ· 1873 ամի։

Այսպիսի հրատարակութեանց հարկաւորութեան վերայ մեք արդէն առիթ ենք ունեցած ցուցանել „Փարոսի“ Բ· տետրին մէջ (յէջ 28)· ուստի այժմ յիշելով այս տեղ սոյն այս պատուական մատենիս 'ի լոյս ելանելն, մեք կարող չեմք չցանկալ՝ որ Ղէվիածնական տպարանն այսուհետև ևս շարունակէ այսպիսի օգտակար երկասիրութեանց հրատարակումը։

Գ·

Տոմար ընդանիկան 1874—1875 թ· Հայ· Ա· աշխարհէրեաց Տ· Սրբոյ հոգի Ա· Երէցեանց· Տփղիս, 1874 ամի։

Այս հրատարակութեան օգտակարութիւնն ևս ակն յայտնի է· ուստի նշանակելով այս տեղ նորա հրատարակումը, մեք 'ի սրտէ ցանկանում եմք որ այդ պատուական աշխատութիւնդ շարունակուի, և օր ըստ օրէ կատարելագործուի, մանաւանդ՝ մեզ ցանկալի՝ մատենագրական մասնոցն, այնպէս որ նա լինի որպէս հայելի ամենայն Հայերէն նորատիպ մատենից և հրատարակեալ պարբերական թերթից, որք լոյս են տեսանում ոչ միայն Ռուսաստանի, այլ և Տաճկաստանի մէջ։

Դ.

Ներբէս Լամբրոնացւոյ Ներբողք Հոգւոյն սրբոյ եւ ընտրեան վերայ. փոխեց գրաբարէից աշխարհաբար. Խոր. տահ. Մէրզաբեկեանց. ի Բաքու. 1874 ամի։

Նշանակելով այս տեղ և սոյն այս տետրակիս հրատարակումը, որ ոչ փոքր օգուտ կարող է բերել ոչ միայն մեր բարեպաշտ ժողովրդականաց, այլ և գպրոցական աշակերտաց, որպէս հոգևոր բարոյական ընթերցուածք, մեք ցանկանում ենք գերապատիւ աշխատասիրին յետ այսորիկ ևս աշխատել հարստացնելու զմեր աշխարհաբառ գրականութիւնը այսպիսի օգտակար թարգմանութեամբք։

ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ „ԱՐԱՐԱՏ“ ԱՄՍԱԳՐԻՆ

ԵՒ

ՄԵՐ ԴԱՏՆ ԷՋՄԻԱԾՆԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՀԵՏ ԱԶԳԻՍ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԵԻ։

Իմ հանգուցեալ ծնողիս Մսերայ Մ. Մսերեանց նորատիպ „Մանր Ուսմունք ազգային եկեղեցական Պատմութեան“ վերնագրով գրքոյկն, որոյ վերայ մեկ համառօտ ծանօթութիւն տպագրուեցաւ „Փարոսի“ նախընթաց տետրին մէջ, ոչ փոքր տարաձայնութեան առիթ եղև Էջմիածնայ կղերական „Արարատ“ ամսագրին, որով և յայտնուեցաւ վերջապէս այդ ամսագրի բուն և իսկա-

կան գաղափարներն, որովք նա կամի լուսաւորել զմեր ազգը, և լուսաբանել զմեր եկեղեցական պատմութիւնը։

„Աշարագայ“ կարծիքով „Մանր Ուսմունք ազգային եկեղեցական Պատմութեան“ գրքոյկն ոչ միայն անյարմար և անօգուտ է մեր ազգային և հոգևոր դպրոցաց համար, այլ և դատանւում է նորա մէջ երկու պատմական սխալ։

„Աշարագայ“ այսպիսի կարծեաց վերայ ես երբէք ուշ ևս դարձուցանելու կամ խօսք ու գրոյց բանալու չէի՝ եթէ այդ ամսագիրդ չհամարուէր օրդան մեր հոգևորականաց և չհրատարակուէր մեր Վեհափառ Կաթուղիկոսի հրամանաւ և թոյլատուութեամբ։ Եւ որովհետև այդ ամսագրում մի բառ ևս կարող չէ հրատարակուիլ առանց Նորին Վեհափառութեան գիտութեան, ուստի ինձ յոյժ ցաւալի է կարծել՝ թէ Նորին Օծութիւնն ևս հակամէտ է նոյն կարծեաց, որք հրատարակուում են „Աշարագայ“ ամսագրում յամօթ և 'ի նախատինս ազգային գրականութեան։ Ինձ յոյժ ցաւալի է տեսանել նոյնպէս՝ թէ ծերունի Մսերի նման մարդն, որ իւր գեղեցիկ և ազդօգուտ գրականական վաստակոց համար զարժանին վարձը ստացած էր Ներսէս Ե· Կաթողիկոսի նման Հայրապետէն, այժմ այսպէս ոտնակոխ է լինում, և նորա աշխատութիւնքն Հայկազնեայ մանկանց համար՝ անօգուտ են համարւում։ Ինձ թուի՝ թէ „Աշարագայ“ աշխատակիցքն կամ բոլորովին

մոռանում են, և կամ բնաւին ծանօթ չեն այն անցած գնացած մեր օրերին, երբ որ մեր դպրոցներում չկային և ոչ մէկ կրօնական օրինաւոր դասագիրք, և եթէ կային՝ այնք ևս կամ թարգմանութիւնք էին 'ի Ռուսաց լեզուէ, և կամ բոլորովին անհասկանալի և անյարմար մեր զաւակաց համար: Բայց երբ Ծերունի Մսերն մշակեց զմեր կրօնական դասագրքերը բուն իսկ Հայկական աղբիւրների վերայ, և բացաւ ամենեցունց համար զհեշտ և զուղիղ ճանապարհը այդ ասպարիզում, այն ժամանակ Մսերն աւելորդ է համարւում, և նորա աշխատութիւնքն անօգուտ և պատմական սխալներով լի:

Այսպէս ահա, եթէ 'ի մի կողմանէ ես կարող չեմ չցաւիլ այս եղելութեան վերայ, 'ի միւս կողմանէ կարող չեմ չուրախանալ՝ թէ „Մանր Ուսմունքի" պատճառաւ յայտնուեցաւ „Աբաբաստայ" ոգին: Այժմ բացայայտ տեսնուում է թէ ոչք „Աբաբաստայ" կարծիքով կարող են համարուել ազգասէր, գործունեայ և հաւատարիմ զաւակ Հայաստանեայց եկեղեցւոյ, և ոչք ազգուրած, վնասակար, ազգատեաց, և այլն: Նոքա՝ որք միշտ գովում են զՄայր Աթոռոյ Միաբանութիւնը, որք աւելի նուիրաբերութիւն են առնում նորան, և որք վերջապէս կուրօնէն հաւատում են „Աբաբաստայ" քարոզութեանց,—ազգասէր են և հաւատարիմ որդիք Հայաստանեայց եկեղեցւոյ. իսկ նոքա՝ որք որևիցէ պատճառաւ

բաղդ են ունեցած անհամաձայն դատուելու „Էրա-
ջապայ“ հետ, և կամ ցուցանելու նորա սխալ
կարծիքները,—աղդուրած են և ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՅ: Բայց թողումք
զայս ամենայն, որպէս երկրորդական պարագայք,
և դառնամք „Էրաջապայ“ տպագրած քննութեան
„Մանր Ուսմունքի“ վերայ, ցուցանելով զնախա-
կան պատճառը երևելոյն այդ քննութեան:

1873 Թուականի վերջերում երբ որ ստացուեցաւ մայրաքաղաքումս Էջմիածնատիպ Օրացոյցն 1874 ամի, տեսանելով որ իմ ծնողիս „Հաւատապատում“ և „Քրիստոսապատում“ տետրերն դարձեալ նշանակուած են Մայր Աթոռոյ տպարանում վաճառուող մատենից կարգում, ես՝ գրութեամբս 'ի 27 էն Նոյեմբերի նոյն 1873 ամի՝ խոնարհաբար կրկնեցի Վեհափառ Պատուզիկոսին զնմ խնդիրքը „կարձել զոչ գովելի և զանկարգ ընթացս տպարանի սրբոյ Աթոռոյ, համաձայն իւր խոստման, և չտալ որդւոյ և գերդաստանի հանդուցեալ հաւատարիմ սպասաւորի ԵԿԵՂԵՑՈՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ կրել ՁԵԱՍ և զԵԿԻԼ յօգտից, որոց ունիմք լիակատար իրաւունս“, յաւելացնելով 'ի վերջոյ և զայս բան՝ թէ „ես չկարծեմ՝ զի Աթոռն Սրբոյ Էջմիածնի ՄԵԱՅ կարօտ այն քանի մի կոպեկից, զորս ստանայ 'ի վաճառմանէ „Հաւատապատում“ և „Քրիստոսապատում“ տետրակաց“:

Նորին Վեհափառութեան հրամանաւ այս

զրութեանս պատասխանեց Սրբազան Մեսրոպ եպիսկոպոսն Սմբատեանց (՝ի 22 էն Դեկտեմբերի նոյն 1873 ամի), յայտնելով իւր նամակի մէջ նախ և յառաջ՝ թէ որովհետև տպագրութիւնքն „Հաւատապատում“ և „Քրիստոսապատում“ տետրակաց եղած են իբր „յաւուրս երջանկայիշատակ Մատթէոս Կաթողիկոսի“, ուստի „և չէ պարտ (ինձ) այդքան հետախոյզ լինել զերևելոցն՝ի միջի տետրակաց այնոցունց“, և ապա՝ թէ „Նորին Վեհափառութիւնն հայցելով Աստուծոյ զերանաւէտ երջանկութիւն վասն հոգւոյ հանգուցեալ հօր իմոյ“,—„Փափագի և զՁեր սիրելութիւնն զնմանութիւն Հօրդ՝ի Ձեզ բերելով՝ զնոյնպիսի փոյթ և հոգ յանձին ունել, որով և զպատիւ Ազգասէր և կրօնասէր Հօրդ իրաւամբ ժառանգել՝ի յաւերժացուցանել զանուն նորա յազգային տարեգիրս“:

Սրբազան Մեսրոպ եպիսկոպոսի այսպիսի զրութիւնն, խոստովանիմ՝, ոչ սակաւ ներգործութիւն ունեցաւ իմ վերայ զոնէ այն ժամանակ. և որովհետև ես՝ զկնի մահուան իմ սիրելի ծնողիս սաստիկ վհատած էի, և համարեայ թէ ևՀոգւով և մարմնով թուլացած, կարծես թէ առանձին իմն ազդեցութեամբ՝ի նորոյ կենդանացայ, և՝ի պատիւ Վեհափառ Կաթուղիկոսի և՝ի յիշատակ իմ հանգուցեալ ծնողիս, վճռեցի մոռանալ այն ամենայն վնասը, զոր հասոյց մեզ Էջմիածնական տպարանն հրատարակելով յամի 1865, հակառակ

Օրինաց Տէրութեան, „Հաւատապատում“ և „Քրիստոսապատում“ տետրիկն *), միայն որ և Նորին Վեհափառութիւնն առ 'ի մխիթարելոյ զիս, ընդունել տայ՝ եթէ արժան համարէ՝ զնորատիպ մատենիկն իմ Ծնողի „Զանը Ուսմունքը ազգային եկեղեցական պատմութեան“ իբրև հրահանգ մեր ազգային և հոգևոր դպրոցներում։ Ուստի, զինի յայանելոյ զիմ ուրախութիւնը և շնորհակալութիւնը Նորին Վեհափառութեան ինձ ցոյց տուած սիրոյ և տուած օրհնութեան համար, ես՝ գրութեամբս յ9 Փետրուարի 1874 ամի, պատասխանեցի Ամիրտեանց եպիսկոպոսին այսպէս·

„Ընթերցայ նաև զգեկուցումն Ձերոյին Սրբազնութեան վասն հանդամանաց տպագրութեան մատենակաց հօր իմոյ, և ս և զկարատն Ձեր՝ թէ „չէ՛ պարտ ինձ այդքան հետախոյզ լինել զերևելոցն 'ի միջի տետրակաց այնոցունց“։ Հանդամանքն տպագրութեան՝ յայտնի են ինձ, որպէս և այն ամենայն վնասն, զոր հասոյց մեզ սուրբ Աթոռն։ Այո՛ հանդիպիլ այսպիսի զրկանաց, և յումմէ՝ 'ի կողմանէ սրբոյ Աթոռոյդ, որում որպէս հայրն իմ, նոյնպէս և ես, միշտ պաշտպան հանդիսացեալ էաք, ցաւ մեծ եղև վասն մեր· և հայրն իմ միշտ, և յառաջ քան զմահն, կրկնէր՝ „ահա՛ վարձն իմ 'ի ծերութեանս...“։ Իսկ վասն խրատու Ձերոյին Սրբազնութեան համարձակիմ ասել՝ թէ խրատդ չէ՛ այդքան դիւրին կատարել՝ որպէս կարծէքդ։ Եւ վասն էր „չէ՛ պարտ ինձ հետախոյզ լինել զերևելոցն 'ի միջի տետրակաց“, յորժամ տետրակքդ այդոքիկ վնասու պատճառ լինին ինձ, և օգուտ բերեն միայն սրբոյ Աթոռոյդ, որ միայն յաւուրս երջանկայիշատակ Հայրապետացն Ներսիսի և Մատթէոսի

*) Տես զայսմանէ 'ի „Փարոսի“ տետր Ա· էջ 35—41, և տետր Բ· էջ 50—55։

պաշտպաններ զերաւունս և գնահատեր զաշխատութիւնս մեր։ Բայց որպէս և իցէ, եղև որ ինչ եղևն, և ոչ գոյ յոյս 'ի վերադարձուցանել զկորուսեալն։ Ուստի ընդ ամին առաքեմ առանձին ծրարաւ զերկու օրինակս 'ի Նորատիպ մատենէն հանդուցեալ հօր իմոյ ընդ վերնագրովս „Մանր Ուսմունք ազգային եկեղեցական Պատմութեան", յորոց զմի օրինակ խնդրեմ ընդունել իբրև նուէր սիրոյ յինէն, և զմիւսն մատուցանել Նորին Վեհափառութեան, խնդրելով՝ զի եթէ արժանի համարեսցէ՝ ընդունիցի զայն որպէս հրահանգ յազգային և 'ի ծխական դպրոցս։ Ցոյս իմ մեծ է, զի Նորին Վեհափառութիւնն, վասն սակաւիկ մի մխիթարելոյ զիս, և վասն մոռանալ տալոյ զինասն՝ հասուցեալն մեզ, չմերժեսցէ զայս խնդիր իմ"։

Այս գրութեանս, Սրբազան Մեսրոպ եպիսկոպոսն Սմբատեանց, պատասխանեաց 'ի 27 էն Մարտի նոյն 1874 ամի, այսպէս.

„Օպատուական նամակ յարգութեանդ ընկալեալ և ընթերցեալ ոչ սակաւ բաւականացայ. ուստի և փութամ պատասխանել առ 'ի և զՁեզ բաւական առնել։

„Հնորհակալութեամբ հանդերձ ընկալայ ընդ նամակին նաև զերկու օրինակս 'ի Նորատիպ մատենէն արժանայիշատակ Հօր Ձերոյ, ընդ վերնագրովս. „Մանր Ուսմունք ազգային եկեղեցական Պատմութեան", յորոց զմին ընդ նամակին մատուցի Վեհափառ Հայրապետին մերոյ յընթեռնուլ, և Նորին Վեհափառութիւնն յետ հաճութեամբ սրտի ընթեռնլոյ զայն՝ զնամակն վերադարձոյց ինձ. իսկ զդրքոյկն յանձնեաց ուսումնական ժողովոյն Ս. Էջմիածնի 'ի նկատողութիւն. զորոյ զքննութեան արդիւնս ունիք նկատել և ընթեռնուլ յԱրարատ ամսագրի։

„Օաշխատասիրեալն Ձեր „զՓարոսն" ցարդ չէ' իմ տեսեալ. սակայն բարեկամական խնդիր իմ այս է, որպէս և յուսամն զի աղգասիրական իմն զգացմամբ չյօժարեսջիք տպագրել յայնմ գծանրալուր յօդուածս՝ վերաբերեալս գործոց և կառավարութեան սրբոյ Էջմիածնի. վասն զի՝ քաջայայտ իսկ է սիրելութեանդ Ձերում, զի յամենայն կողմանց 'ի ներքուստ և յարտաքուստ ոչ սակաւ վիշտ, ցաւ,

սպառնալիք, խրոխտմունք, և այլն և այլն տեղան 'ի վերայ հոգևորականութեան ազգիս· ուստի և դուք արժանաւոր Հօր արժանաժառանգ որդիդ ըստ ամենայնի մեծայոյս եմ, թէ զՔրիստոնէական ջերմ զգացմունս և զազգային զեռանդուն սէր ըստ օրինակի արժանայիշատակ ծնողիդ յանձին բերելով՝ յամենայն դէպս ունիք ախոյեան և պաշտպան եկեղեցւոյս Հայաստանեայց հանդիսանալ բանիւ և գրով· և ոչ երբէք վշտացեալ 'ի բանից Մ—ւոյ կամ յանուն Մ—ւոյ պախարակել զամբողջ Միաբանութիւնն Ս· Էջմիածնի հրատարակմամբ զանազան յօդուածոց"։

Զկնի այսպիսի պատասխանւոյ այլ ի՞նչ էր մնում ինձ առնել· մնում էր անտարակոյս համբերութեամբ սպասել կատարման խոստմանն և ընթեռնուլ զքննութիւնն Ուսումնական ժողովոյն „Էջմիածին" ամսագրի, զքննութիւնն՝ որ, որպէս կարծել տայ Մեսրոպ եպիսկոպոսի գրութիւնն, լինելոց էր յօգուտ մեր։ Բայց ի՞նչ եղև, և ո՞րպէս կատարուեցան նախայիշեալ Սրբազանիս խոստմունքն, և կամ ո՞վ այս գործումս ցոյց տուաւ „զՔրիստոնէական ջերմ զգացմունս և զազգային զեռանդուն սէր" ընթերցողք կտեսնեն 'ի ներքոյ։

„Էջմիածին" այն տետրի, որոյ մէջ տպագրուեցաւ խոստացեալ քննութիւնն, այս տեղ հասանելէն յառաջ, հասաւ Սրբազան Սիւնհոդոսի հրովարտակն, 'ի 22 էն Մարտի 1874 ամի, ընդ համարաւ 579, որոյ մէջ համարեայ թէ լռութեամբ տեսի անցքացած Էջմիածնատիպ „Հաւատապատում" և „Քրիստոսապատում" տետրերն· իսկ Կոստանեանցի տպագրած՝ նոյն մա-

տենիկների համար գրուած տեսի զայս՝ թէ „պարտ է համարել լեալ թոյլտուութեամբ հանգուցեալ Մատթէոս Կաթողիկոսի 'ի 1865 ամի, առանց որոյ չկարէր Յովսէփ քահանայն վստահիլ (՞) յայնպիսի ձեռնարկ, յապացուցութիւն որոյ լեալ է տպագրութիւն նոցին 'ի մի և նոյն ժամանակի 'ի տպարանի Էթուոյս *), որ առանց թոյլտուութեան յայնժամեան Կաթողիկոսի չկարէր լինիլ բնաւ **)։ վասնորոյ և Սինոդս չհամարի ինքեան իրաւունս առնել ըստ ներկայ խնդրոյս պարոն Օ.արմայրայ Մսերեանց զանօրէնութիւն ինչ, զորմէ և ծանուցանել նմա 'ի ձեռն Հոգևոր Կառավարութեանդ Մոսկվայու, և ապա ստացեալ 'ի նմանէ 'ի բաժս անդրոշմ թղթոց, զործադրելոց 'ի Սինոդիս ըստ խնդրոյ նորա զերկու ռուբլի վաթսուն կոպէկ, առաքել ուղղակի 'ի տեղական Էրքունի դանձարանն“։

Սրբազան Սիւնհոդոսի (որոյ անդամոց մինն է նաև վերոյիշեալ Մեսրոպ եպիսկոպոսն Սմբատեանց)՝ այսպիսի վճիռն ոչ սակաւ զարմացոյց զիս։ Օ.արմացոյց, ասում եմ, ըստ որում Սիւնհո-

---

*) Կոստանեանցի տպագրութիւնն եղած է 'ի Տփխիս և ոչ Էջմիածին թոյլտուութեամբ Տփխիսայ դրաքննական ժողովոյ, և ոչ Կաթողիկոսի, որպէս յայտնապէս տեսանի 'ի տպագիր օրինակս „Մանր Ուսմունքի“։

**) Էջմիածնական տպագրութեանց վերայ „Հաւատապ“. և „Քնապատ“. տեսարակաց չկայ ոչ դրաքննչի թոյլտուութիւնն, ոչ Կաթողիկոսի անունն և ոչ տպարանի։ Ուրեմն ինչի՞ վր է հիմնում Սիւնհոդոսն իւր այս ասածը՝ չգիտեմ։

դոսի հրովարտակին մէջ ես այլ ինչ տեսայ, և Սմբատեանց եպիսկոպոսի նամակի մէջ այլ ինչ։ Մինն ենթարկում է զիս տուգանաց և հրաժարւում է 'ի վճռելոյ զիմ դատը, իսկ միւսն շտապում է պատասխանել իմ նամակիս „առ 'ի բաւական առնելոյ զիս“։ Բայց այս դեռ ոչինչ· ահա հասանում է վերջապէս „Արքապն“ խոստացեալ քննութեամբ „Մանր Ուսմունքի“ վերայ, բայց քննութեամբ ոչ Նչմիածնական Ուսումնական ժողովոյ, այլ Աբէլ արքեպիսկոպոսի, որ թէ երբ է նշանակուած անդամ նոյն ժողովոյ մեզ բնաւ յայտնի չէ։ Ընթերցայ և նկատեցի, ըստ գրելոյ Մեսրոպ եպիսկոպոսի, և զայս քննութիւնս, և դարձեալ ոչ փոքր զարմացայ։ Զարմացայ նախ այնու վերայ՝ զի յիշեալ քննութիւնն, Սիւնհոդոսի հրովարտակին պէս, բոլորովին հակառակ երևեցաւ ինձ 'ի Սմբատեանց եպիսկոպոսէն՝ ըստ հրամանի 'Նորին Վեհափառութեան՝ ինձ եղեալ ազգարարութեան 'ի 27 էն Մարտի, որ յիշուեցաւ 'ի վերոյ։ Զարմացայ ապա այնու վերայ՝ զի տեսի յայտնապէս՝ թէ Սրբազան Աբէլ արքեպիսկոպոսն, որ թէև աշակերտած է իմ հօր մօտ և այժմ հասած արքեպիսկոպոսութեան աստիճանին, չունի ուղիղ դաղափար եկեղեցական ժողովոց վերայ։

Գործոյս այսպիսի հակառակ ամենայն ակընկալութեանց ընթացք ստանալն, ճշմարիտ պիտոյ է ասել, սաստիկ զայրացոյց զիս, և կարող էր

արդեօք, հարցանում եմ զձեզ ո՛ համազգիք, չզայրացնել։ Խոստովանիմ նոյնպէս՝ թէ ես երբէք չէի սպասում այսպիսի վճռոյ։ Ընդհակառակն ես յուսով էի՝ զկնի հանգստացուցիչ գրութեանց Մեսրոպ եպիսկոպոսի և իմ խոստման մոռանալ ամենայն ինչ՝ թէ բոլոր անհամաձայնութիւնքն և անբաւականութիւնքն արդէն վերջացած են 'ի միջի իմ և 'ի միջի Ս. Աթոռոյս, և թէ այսուհետև մի միայն սէր և ձեռնտուութիւն միմեանց պիտի տիրեն 'ի միջի մեր։ Սակայն ի՞նչ եղև. Սուրբ Աթոռն, նախ՝ փոխանակ „զՄանր Ուսմունքը ազգային եկեղեցական Պատմութեան“, ըստ խոստման, ընդունելոյ որպէս հրահանգ՝ անուղիղ քննութեամբ կասկածելի երևեցոյց առաջի ժողովրդեան և անպատուեց զնորա հեղինակի բարի յիշատակը. և երկրորդ՝ փոխանակ հատուցանելոյ ինձ զհասուցուած ճնասը (2400 ռուբլի), ենթարկեց զիս տուգանաց (2 ռ. 60 կ.)։

Ահա այսպէս, Էջմիածնական տպարանն, և վերջապէս „Արարատ“ ամսագիրն կարող չէին, կրկնում եմ, աւելի սաստիկ անպատուել զմեզ և ծիծաղել մեր վերայ, որպէս անպատուեցին և ծիծաղեցին տալով գործոյս այսպիսի վախճան։ Եւ ո՞ր մնացին իմ բարութիւնն, իմ յօժարամտութիւնն՝ 'ի պատիւ Վեհափառ Կաթողիկոսի՝ մոռանալ մեզ հասուցուած ճնասը, և պահել սուրբ Աթոռոյ պատիւը չհասուցա-

նելով գործը մարմնաւոր դատաստանի։ Թող վճռեն ուրեմն մեր համազգիք՝ թէ կա՞յ արդեօք այս գործոյս մէջ արդարութիւն, ո՞ր է այն ազգասիրութիւնն, զոր „Աշխարհ“ ամսագիրն քարոզում է միշտ, բայց ինքն գործով չէ՞ կատարում, և ո՞վ ընթացաւ այս գործոյս մէջ Քրիստոնէական ջերմ զգացմամբ և ազգասիրական եռանդուն սիրով։

Այս ամենայն այսպէս լինելէն յետոյ ի՞նչ էր մնում ինձ առնել· մնում էր միայն երկու բան· ա· կամ լռել և տանել համբերութեամբ մեզ ցոյց տուած անպատուութիւնը, անարդարութիւնը և վնասը, և բ· կամ պատերազմել գրչաւ, ցուցանել այս պատմութեան խայտառակ կէտերը 'ի խրատ ապագայից, և դիմել մարմնաւոր դատաստանի զմեր վնասը յետս դարձուցանելոյ համար։ Այս ընտրեցի զվերջինը· ուստի և փութացայ տալ „Աշխարհայ“ յօդուածոց զհետևեալ պատասխանները· յորոց ընթերցողք կտեսնեն՝ թէ ո՞րքան անուղիղ են քննութեան հեղինակի կարծիքն իմ ծնողիս դասատետրի վերայ, և ո՞րքան կարող են այդ կարծիքներդ արգելք լինել ընդունելու զայդ մատենիկը որպէս հրահանգ մեր ազգային և հոգևոր դպրոցներում, և կամ փոխելու ուսումնականաց կարծիքը այդ երկասիրութեան վերայ, որ ստացած է արդէն զարժանին գովութիւնը։

Ը·

Առաջին պատասխան „Արարատ“ ամսագրին *)։

„Արարատ“ ամսագրի ներկայ ամի Ապրիլ ամսեան տետրին մէջ կարդացի Սրբազան Աբել արքեպիսկոպոսի՝ իմ հանգուցեալ հօրս „Մանր Ուսմունք ազգային եկեղեցական Պատմութեան“ վերնագրով նորատիպ մատենիկի վերայ գրած ծանօթաբանութիւնը կամ քննութիւնը, զոր ես ևս յիմ կողմանէ կարող չեմ անցանել առանց ուշադրութեան, մանաւանդ զի նա պահանջում է ինձանից պատասխան։

Ծանօթաբանութեան սրբազան հեղինակն քննելով զյիշատակեալ մատենիկը՝ գտանում է նորա մէջ երկու անճշգրտութիւն կամ լաւ ևս ասել կարծեաց անհամաձայնութիւն։ Առաջին անճշգրտութիւնն է այն՝ որ նա չէ հաւատում թէ մեր եկեղեցւոյ մէջ կանոն եղած լինի, որ Զատկի օր քահանայք և դպիրք սպիտակ զգեստներով զարդարուին, և երկրորդ այն՝ որ մեր ազգային եկեղեցական ժողովոց թիւն մինչև ցամն 1651 լինի միայն քառասուն և եօթն։ Ուստի խնդրում է ինձանից, իբր հեղինակէն նոյն մատենի, ապացոյց և բացատրութիւն։ Աբել Սրբազանն համոզուած է նոյնպէս թէ իմ հայրս չէր կարող իւր երկասիրութեան մէջ այսպիսի անճշգրտութեանց տեղի տալ, և կարծում է որ „փոփոխութեանց“ պատճառ ես եմ միայն։

Այս շատ ուրախ կլինէի իմ վերայ առնուլ այդ՝ Սրբազանի կարծիքով՝ անզգուշութեանց սպրդումը իմ ծնողիս երկասիրութեան մէջ. բայց հարկադրուած եմ յայտնելու՝ որ յիշեալ մատենին մէջ, տպագրութեան ժամանակ, բաց 'ի Քաղկեդոնի ժողովոյն վերաբերեալ յօդուածոյն (այն ևս դրաքննչի հրամանաւ) այլ ինչ փոփոխութիւն եղած չէ. ուստի ես յոյժ և յոյժ կասկածում եմ՝ որ այնպիսի զգոյշ մարդն, որպիսի էր իմ հայրս, որ առանց հիմնաւոր կերպիւ բանը իմանալոյ և քննելոյ ոչինչ չէր գրէր, թոյլ տուած լինի իւր երկասիրութեան մէջ որ և իցէ անճշգրտութիւն և կամ պատմութեան ընդդէմ բան։ Անտարակոյս՝ եթէ նա, ծերունի Մսերն, այժմ կենդանի եղած լինէր՝ կուտար իւր

---

*) Այս պատասխանս տպուած է „Արարատ“ ամսագրում։

սիրելի աշակերտին, ծանօթարանութեան հեղինակին, զարժանի պատասխանը և կփարատէր նորա կասկածը։ Իսկ ես, ցաւում եմ, որ առայժմն, յայսմ մասին, աւելի ինչ ասել կարող չեմ, բայց զուցէ գայ օր՝ որ ասեմ։ Զայս միայն կարող չեմ չյաւելացնել՝ որ ես և Սրբազանի նման տարակուսիմ 'ի նմանէ ցուցած իբր „պատմութեան ընդդէմ երկու կտորների“ վերայ, և աւելի շատ հաւանիմ կարծել որ գայ նոյնպէս օր, երբ որ նա ինքն յարգոյ քննաբանն համաձայնի հանգուցեալ Մագիստրոսիս կարծեաց հետ, և գտանէ առանց իմ օգնականութեան ինձանից խնդրած բացատրութիւնը և կամ վկայութիւնը։ Իմ կարծիքով օրինաւոր ազգային եկեղեցական ժողով համարուելու են այնքիկ, զորս պատմութիւնն և զիտութիւնն այնպէս է համարում, և ոչ որպէս ես և կամ միւսներ ուսան Սրբազանի ասելն „ժողովն ժողով է դարձեալ“ ապացոյց չէ։ Նոյն մատենիկի նախընթաց 32-երորդ յօդուածէն յայտնապէս երևում է՝ թէ որպիսի ժողովքների համար է հօրս խօսքն։ Նա ասում է· „կամ հերձուածների և ուղղափառ հաւատոյ դէմ մոլորութիւնքը մերժելոյ համար, և կամ անկարգութիւնքը վերացնելով՝ պէտպէս բարեկարգութեանց կանոններ հաստատելոյ համար“։ Ուստի այս խնդրոյս մէջ, բան իս, տարակուսական բան չէ մնում։ Բայց ես կարծում եմ՝ հաստատապէս՝ թէ յիշուած եկեղեցական ժողովները համարելու է այնպիսի ժողովներ, որպիսիք էին Ցիեզերական ժողովներն, և ոչ այնպիսի, որպիսի կամի համարել Սրբազան քննաբանն։ Նորա կարծիքով Հայրապետութեան յաջորդութեան ժողովներն ևս ժողով են դարձեալ։ Այո՛, ժողով են, բայց այնպիսի ժողովներ չեն, որպիսի էին ժողովներն հաւատոյ դէմ եղած մոլորութիւնքը և այլն քննելոյ համար։ Ուրեմն այս տեղ անճշդութիւն չկայ, այլ կայ միայն կարծեաց անհամաձայնութիւն։ Արդ Սրբազանի նշանակածթիւն ևս կարող է ճիշդ լինել, որպէս ճիշդ է նաև իմ՝ հօր բերած թիւն· այն է՝ իրաքանչիւրն այն մտքով, որով առնուի։ Կարող չեմ չվկայել և այն՝ որ հայրս ուսած լինելով իւր ազգային եկեղեցւոյ պատմութիւնը բուն ազգային աղբիւրների վերայ՝ ծանր է ինձ համաձայնել արդոյ քննաբանի հետ՝ թէ նա յօժարած լինի մուծանել իւր եկեղեցւոյ մէջ „ուրիշ ազգերից առած“ սովորութիւններ։ Այսպիսի սովորութիւնք, ընդհակառակն, սովոր են մուծանել բան

մեծի մասին մեր քահանայք։ Օրինակ։ Ահա մայրաքաղաքումն կիւրակէական առաւօտեան ժամը, Թուսաց նամանակու համար, սովորութիւն են առած Շաբաթ երեկոներին ասել։ Այլ սովորութիւնքը յիշել չկամիմ։

Ծանօթութեան Սրբազան հեղինակին իր նոյն յօդուածոյ մէջ յայտնում է և այս՝ թէ ես որպէս թէ պարտական էի յառաջ քան գրագրութիւնը յիշեալ մատենի ներկայացնել զայն 'ի քննութիւն Վեհափառ Հայրապետին, և թէ ես որպէս թէ խնդրած եմ այժմ 'ի Հոգևոր Իշխանութենէ թոյլտուութիւն վաճառելոյ զայն գաղտնարը։

Թէ ո՞րքան պարտաւորիչ էր ինձ համար պահել կամ չպահել զառաջին խրատը՝ ես քննել չկամիմ, ըստ որում անօգուտ է։ իսկ երկրորդ կարծիքի համար պարտք եմ համարում յայտնել՝ թէ ես երբէք չեմ խնդրած 'ի Հոգևոր Իշխանութենէ թոյլտուութիւն վաճառելոյ „զՄանր Ուսմունքը“, ըստ որում այն առանց այս ևս վաճառուում է սակաւ առ սակաւ։ իսկ իմ խնդիրքս առ Վեհափառ Կաթողիկոսն բոլորովին այլ է եղած։ Ես խնդրած էի, որ այդ մատենիկդ, եթէ արժանի համարուի, ընդունուի իբրև հրահանգ մեր Հոգևոր և Ծխական դպրոցներում *)։ իսկ վաճառման համար խօսք մի ևս չկայ։

Ինձ այնպէս է երևում, որ Աբել Սրբազանն սխալ է հասկացած Վեհափառի հրամանը։ Վեհափառ Հայրապետի յանձնարարութիւնն բան իմ՝ կարծեաց պիտի լինէր ոչ միայն գնել „զՄանր Ուսմունքը“, այլ և վճռել՝ կարելի՞ է թոյլ տալ զայն իբրև հրահանգ մեր Հոգևոր և Ծխական դպրոցներում թէ ոչ։ Իսկ Սրբազան քննիչն փոխանակ ուղղակի պատասխանելոյ՝ այո՞ կամ ոչ, և վճռելոյ՝ կարելի՞ է կամ չէ՞ կարելի, սկսած է պատմական սխալների եռեւէն ընկնել, իւր աշխատասիրած „Ժողովոյ Պատմութիւնը“ գովել և այնոր տպագրութիւնը յայտնել, ինձանից՝ մատենի հրատարակչից՝ բայտարութիւնք և վկայութիւնք պահանջել, և այլն։

Վերջայնեմ խօսքս։ եթէ Հոգևոր Իշխանութիւնն չէ վճռահանում թոյլ տալ իմ հօր այս դասատետրը իբրև հրահանգ մեր Հոգևոր և ծխական դպրոցներում, ես յայտմ

*) Տես իմ վերևում յիշուած նամակն առ Մեսրոպ Եպիսկոպոսն Սմբատեանց 19 էն Փետրուարի 1874 ամի։

մասին նեղանալու և կամ վշտանալու իրաւունք չունիմ· բայց որում իւրաքանչիւր մարդ ունի իւր կարծիքը, որպէս և ես, ղորոշնակ, ունիմ բոլորովին հակառակ կարծիք Մանդինեանցի Էջմիածնատիպ „Նախաշաւղի“ և „Եկեղեցական Պատմութեան“, և կամ Պօղոսյ տիպ „Լուսաշաւղի“ վերայ, թէև նոքա արժանացած են 'ի Հոգևոր Իշխանութենէ ընդունելոյ իբրև հրահանգ մեր Հոգևոր և Ծխական դպրոցներում:

Յուսամ, որ „Արարատայ“ խմբագրութիւնն տեղի կուտայ այս տողերիս իւր ամսագրի էջերում, որպէս պատասխան Աբել Սրբազանին:

Զարմայր Աշեբեանց:

'Ի 22 Մայիսի 1874 ամի 'Ի Մոսկուա:

Բ·

Երէէոէդ պոպասկան „Արարատ“ ամսագրին *):

„Արարատ“ ամսագիրն չբաւականանալով իմ արդէն տուած պատասխանով („Արարատ“ պ· է·), կրկին հրաւիրում է զիս 'ի պատասխանատուութիւն, քանզի ասում է· „Պ· Զարմայր, եթէ պարտաւոր կճանաչէս զանձնդ և կարող ես՝ պատասխանել կամ բացատրել ա հակառակ Հայաստանեայց եկեղեցոյ առաքութեանց՝ Զատիկ օրերը սպիտակ զգեստով զարդարուելոյ նորադիր կարգը, և թ հակառակ պատմութեան և այլն քառասուն և եօթն ժողովները փոխանակ վեսեսուն և մէկի սխալները“:

Թէպէտև ես իմ առաջին պատասխանուցս մէջ բաւական բացատրած՝ էի ինձ առաջարկուած հարցմունքներն, և թէպէտև ես յուսով էի թէ իմ տուած բացատրութիւնքն բաւական համարուին, սակայն՝ որպէս երևում է՝ „Արարատն“ չէ կամենում բաւականանալ իմ տուած պատասխանուով, և 'ի նորոյ պահանջում է յինէն բացատրութիւնք:

„Արարատայ“ այսպիսի ընթացքն զարմանալի և անհասկանալի ինչ է երևում ինձ, և ցուցանում է յայտնապէս՝

---

*) „Արարատն“ զայս իմ պատասխանը՝ որպէս ծանուցանում են ինձ 'ի Ս· Էջմիածնէ՝ վճռել է թողուլ անտիպ:

թէ նա բնաւին ծանօթ չէ ոչ գրականական և ոչ գրաարարպութեան կանոնաց։ Ո՞ր և կամ ե՞րբ տեսնուած է և կամ լսուած պատասխան և բացատրութիւնք խնդրել մատենի հրատարակչէն։ Իրաւանչիւր մատենի պատասխանատուն իւր հեղինակն է, և ոչ հրատարակիչն։ Բայց որպէս և իցէ ես յօժարում եմ տալ նոր բացատրութիւնք ցուցանելոյ համար Աբէլ արքեպիսկոպոսի և „Աբարարայ“ ունեցած գաղափարաց անհիմնութիւնքը։

Առաջին հարցման վերայ երկար խօսել ես չկամիմ, բաւ որում ես արդէն իմ առաջին պատասխանուցս մէջ ասացի՝ թէ ես առժամս անկար եմ ցուցանելու դայն, զոր խնդրում է „Աբարարն“, բայց դուցէ դայ օր՝ որ ցուցանեմ։ Զկնի այսպիսի 'ի սրտէ խոստովանութեան՝ թէ ուզեմ ի՞նչ է կամենում յինէն „Աբարարն“ չգիտեմ։ Գուցէ կամի նա, որ ես ասեմ „պատուական „Արարատ“ ես տղէտ եմ, և պատասխանել քեզ կարող չեմ, խնդրեմ ներել զիս“։ Բայց ոչ, եթէ ես չունիմ դեռ այն գիտութիւնը և հմտութիւնը կրօնական ուսմանց մէջ, զորս ունէր իմ հանգուցեալ ծնողս, ունիմ գոնէ առողջ դատողութիւն, որ կարող եմ չթողուլ առանց քննութեան զառաջարկեալ հարցմունքները, որք՝ կրկնում եմ՝ կարող էին առաջարկուիլ միայն այնպիսի ամնադրի կողմանէ՝ որպիսի է „Աբարարն“ ամնադրն։

Աբէլ արքեպիսկոպոսի և „Աբարարայ“ ամնադրի կարծիքով՝ Զատկի օրին սպիտակ զգեստներով զարդարուիլն հակառակ է Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութեանց։ Հարցանում եմ՝ եթէ այդ սովորութիւնդ հակառակ է, ապա ուրեմն ո՞ր սովորութիւնն կամ լաւ ես ասել ո՞րպիսի դայն ունեցող զգեստներով զարդարուիլն Զատկի օր հակառակ չէ Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութեանց, և ոչ միայն ոչ հակառակ, այլև կանոնադրուած և պարտաւորիչ։ Եւ դարձեալ՝ Աբէլ արքեպիսկոպոսն չէ ուրանում՝ թէ մեր եկեղեցւոյ մէջ կայ սովորութիւն „ոչ միայն զատկի օր, այլև ամեն Յարութեան կիւրակէ օրերը, իւղաբերից աւետարան կարդալու ժամանակ սպիտակ զգեստ դործ դնել“։ Եթէ կայ այսպիսի սովորութիւն, ուրեմն պիտի լինի և նորա կանոնն (որ յուսամ՝ անշուշտ չպիտի լինի սրբազան քննաբանիս), և եթէ „իւղաբերից աւետարանի“ համար կայ, ի՞նչ զարմանք՝ որ Զատկի օրի համար ևս լինի, և կամ միևնոյն կանոնն երկուսի համար ևս լինի։ Իւղաբերից աւետարանի

ընթերցման սովորութիւնն ոչ ապաքէն ծագում է Զատիկն, և եթէ այնոր աղբիւրն Զատիկ է, ասեմն ինչ զարմանք՝ որ Զատկի օրի համար ևս լինի այսպիսի կանոն։ Իմ ծնողս՝ յիշելով զայդ սովորութիւնդ՝ ցուցանում է նաև հիմնը իւր տասծին, այն է Մատթէոս և Մարկոս աւետարանչաց գրածները, զորս Աբէլ արքեպիսկոպոսն կամի վերաբերել միայն Իւղաբերից աւետարանի ընթերցման, և չկամի վերաբերել բուն իսկ աղբիւրին՝ Զատկին։

Կարող չեմ այս անգամ ևս չպնդել՝ թէ իմ հայրս ուսած լինելով իւր եկեղեցւոյ պատմութիւնը և սովորութիւնքը բուն իսկ աղգային աղբիւրների վերայ, կարող չէր փոփոխութիւնք առնել և կամ նորութիւնք մտցնել մեր եկեղեցւոյ մէջ։ Այսպէս կարծել կարող են միայն նոքա՝ որք բնաւ ծանօթ չեն իմ՝ հանդուցեալ ծնողիս բնաւորութեան, նորա առ իւր սուրբ եկեղեցին ունեցած սիրոյ և հաւատարմութեան, և վերջապէս նորա կրօնական զբաղումոյ։

Ընդեալ պատասխանոյս մէջ ասացի՝ թէ ընդհակառակն փոփոխութիւնք առնել սովոր են ըստ մեծի մասին մեր քահանայք, և ցոյց տուի օրինակ։ Այժմ կարող եմ ցուցանել այլ նոր օրինակ։ Էջմիածնատիպ Օրացոյցն 1872 ամի „Ամենայն սրբոց Հնոց և նորոց, յայտից և անյայտից“ ասնր փոխելով դրաւ Շաբաթի տեղ Հինգշաբթի, այն է փոխանակ Նոյեմբերի 4 ի, Դեկտեմբերի 21 ին։ Իմ հանդուցեալ ծնողս իւր ասածը հիմնում է Աւետարանչաց բանի վերայ, իսկ մեր քահանայք և կամ Էջմիածնատիպ Օրացոյցն 1872 ամի ինչ՞ վերայ են հիմնում իւրեանց ասած փոփոխութիւնքը, և ո՞վ տուաւ նոցա իրաւունք փոփոխութիւնք առնելու մեր ասնացուցի մէջ։ *) Յուսամ՝ զե „Արարատ“ ամսագիրն՝ որպէս կրօնական հանդէս՝ կյօժարի բացատրել մեզ զայս իրողութիւնը։

Գանք այժմ երկրորդ հարցման։ Ես իմ առաջին պատասխանոյս մէջ, այս հարցմանս պատասխանելոյ ժամանակ ասացի՝ թէ այս տեղ անճշդութիւն չկայ, այլ կայ միայն կարծեաց անհամաձայնութիւն, ևս և թէ Աբէլ արքեպիսկոպոսի նշանակած ժողովոյ թիւն ևս կարող է ճիշդ լինել, որպէս ճիշդ է նաև իմ հօր բերած թիւն, այն է

*) Էջմիածնատիպ Օրացոյցն 1872 ամի տպուած է Վեհափառ Կաթուղիկոսի թոյլատուութեամբ։

իրաքանչիւրն այն մտքով, որով առնում է: Սակայն «Ընդ-
դանուն» չէ կամենում համաձայնել ինձ հետ, և չէ ընդու-
նում դայս իմ ասածը, այլ ընդհակառակն պնդում է՝ թէ
մեր բոլոր եկեղեցական ժողովոց թիւն է որպէս թէ 61, և
թէ Հայրապետաց ընտրութեան համար եղեալ ժողովներն
ևս համարուելու են եկեղեցական ժողովք:

Այս առաջին պատասխանուոյս մէջ արդէն յայտնեցի՝ թէ
որ մտքով հարկաւոր է հասկանալ զեկեղեցական ժողովները,
և որ մտքով հասկացած է նոցա իմ ծնողս: „Կամ հեր-
ձուածները և ուղղափառ հաւատոյ դէմ մոլորութիւնքը
մերժելոյ համար, և կամ անկարգութիւնքը վերացնելով՝
պէտպէս բարեկարգութեանց կանոններ հաստատելոյ հա-
մար", ասում է իմ հայրս իւր մատենիկի մէջ: Հարցանում
եմ՝ այսպիսի կարծիքն ժողովոց վերայ ուղիղ է արդեօք,
թէ ոչ: Ըստ իս՝ ուղիղ է և ճիշդ: Ահա ապացոյց. Կանո-
նական եկեղեցական իրաւաբանութիւնն ասում է. „Ընդ-
անուամբս ժողով (Соборъ), եկեղեցական կանոնական մտքով
պիտոյ է հասկանալ ժողով՝ կազմեալ՝ ի ներկայացուցչաց
բարձրագոյն քահանայապետութեան, այն է՝ յեպիսկոպոսաց,
միայն որոց եկեղեցւոյ մէջ կանոնադրուած կարգով քննելոյ
և վճռելոյ համար քրիստոնէական եկեղեցւոյ և բարոյա-
կանութեան վերաբերեալ խնդիրները, նոյնպէս և եկեղե-
ցական կանոնական իրքը, որք վերաբերին ներքին կողմանց
եկեղեցական կենաց-ժամակարգութեան, ծիսից, եկեղեցական
կառավարութեան և պահպանութեան ահմանեալ կանո-
նաց *)": Ուրեմն եկեղեցական իրաւաբանութիւնն ևս հա-
ստատում է իմ ծնողիս ժողովոց վերայ ունեցած կարծիքը.
և եթէ իմ ծնողիս կարծիքն այսպէս ուղիղ է և ճիշդ
դիտութեան հետ, այլ ի՞նչ է մնում ապա ինձ ապացու-
ցանել կամ բացատրել: Մնում է ապացուցանել մի բան,
այն է՝ թէ մինչև 1651 թուականն մեր ազգի մէջ համա-
րելու է գումարուած 47 եկեղեցական ժողով, ըստ որում
դկնի այնր թուականի եղեալ ժողովներն (որպէս յուցանում
է նաև Աբէլ արքեպիսկոպոսի երկասիրութիւնն) եղած են
միայն Հայրապետաց ընտրութեան համար:

Արդեաւ Աբէլ արքեպիսկոպոսի «Ժողովոց Պատմու-

*) Лекціи Канонич. Права, профессора Московскаго Университета Соколова, 1874 г.

թեան“ մէջ մինչև ց1651 թուականն նշանակուած կան 51 ժողով, յորոց եթէ հանուին 6 եկեղեցական ժողովներն՝ որք վերաբերին միմիայն Հայրապետաց ընտրութեան *), ընդ ամենն կմնան 45 ժողով։ Եւ եթէ այս թուոյս վերայ յաւելցնեմք Սրբազան Արէլ արքեպիսկոպոսի „Ժողովոց Պատմութեան“ մէջ՝ ի բաց թողուած Եղիա եկեղեցական ժողովներն, այն է՝ ու· 432 թուականի՝ Աշտիշատ երկրորդ առ կանոնաւորելոյ զժողովուրդն և զընդունել զժողովն Եփեսոսի, և ը· 726 թուականի՝ ի Մանազկերտ երկրորդ՝ ի մերժել զմոլորութիւն Յուլիանիստաց, — այն ժամանակ մեր եկեղեցական ժողովոց թիւն մինչև ց1651 թուականն կլինի ճիշդ 47, որ և նշանակուած է իմ ծնողիս մատենիկի մէջ։ Որեմն անճշդութիւնն և կամ ընդդէմ պատմութեան սխալն ո՞ր է, որ կամի տեսանել „Աբաբաթն“։

Այժմ դառնամք և նայինք ժողովոց վերայ այն մտքով և աչքով, որովք նայում են Արէլ արքեպիսկոպոսն և „Աբաբաթ“ ամսագիրն, և տեսանենք ճիշդ է արդեօք նոցա նշանակած թիւն 61, թէ ոչ։

Ուշի ուշով համարելով նորին Սրբազնութեան երկասիրութեան մէջ նշանակուած ժողովներն, մեք տեսանում եմք՝ որ նոցա թիւն ոչ է 61, այլ 62։ Թէ ինպէս է եղած՝ որ Սրբազանն սխալուած է զեր ժողովները համարելու ժամանակ՝ չգիտեմ· միայն այսքանս գիտեմ, որ սխալուած է։ Եւ եթէ նոյն ժողովոց վերայ յաւելցնեմք վերևում մեր ցոյց տուած Եղիա՝ ի բաց թողուած ժողովներն, այն ժամանակ ընդ ամենն Սրբազանիս ժողովոց թիւն հարկաւ կլինի ոչ 61, այլ 64։ Վասն որոյ հարկադրուած եմ մերժելու զեմ առաջին դրածն, այն է՝ թէ Արէլ սրբազանի նշանակած ժողովոց թիւն ևս կարող է ճիշդ լինել, և ասելու՝ թէ նորա բերած ժողովոց թիւն ճիշդ չէ և թէ նորա „Ժողովոց Պատմութիւնն“ պակասաւոր է՝ չզարմանակերով իւր մէջ 432 և 726 թուականների ժողովներն։

Այժմ հարցանում եմ՝ ով է սխալուած ժողովոց թուոյն մէջ՝ իմ հայրս թէ Սրբազան Արէլ արքեպիսկոպոսն, և կամ ով է նորա թիւնք մոցնողն և կամ փոփոխութիւնք առնողն մեր եկեղեցւոյ մէջ՝ իմ հայրս թէ մեր քահանայքն և

*) Այն է՝ ժողովքն 854, 972, 1072, 1165, 1603 և 1629 թուականների։

Ինչմիածնեցիքն։ Եւ եթէ իմ հայրս սխալուած չէ և նորութիւնք մուծաց չէ, որպէս տեսաք, ինչու՞ ուրեմն Սրբազան Աբել արքեպիսկոպոսն և „Արարատ“ ամսագիրն այսպէս անհիմն և անտեղի վէճ յարուցին իմ հրատարակած ծնողիս մատենիկի մասին։ Ի՞նչ նպատակ ունէին նոքա զայս առնելով. վրէժխնդրութիւն։ Բայց ինչու՞. միթէ այնու համար՝ որ մեք պահանջում էինք յինչմիածնական տպարանէն մեր վճան՝ 2400 ռուբլի՝ „Հաւատապատում“ և „Քրիստոսապատում“ վերնագրով տետրակաց առանց որ և իցէ իրաւունքի և հակառակ Տերութեան Օրինաց տպագրութեան համար 'ի 1865 ամի··· Սակայն ինչ և լինի պատճառն՝ ես աներկբայ եմ թէ իմ ծնողիս աշխատութիւնն միշտ օգտակար պիտի լինի մեր ազգի դաւակաց համար, որպէս եղած են նորա և միւս երկասիրութիւնքն, և երբէք համարուելու չէ անյարմար և կամ անօգուտ դասագիրք, որպէս կամի կարծել „Արարատ“ ամսագիրն։

Զարմայր Մոեբեանց։

'ի 23 Սեպտ. 1874 ամի 'ի Մոսկուա։

Վերջացնում եմ յօգուտս առ Վեհափառ Կաթողիկոսն, 'ի 29 էն Մայիսի 1874 ամի, գրած նամակիս վերջին խօսքերով.

„Թէպէտ տուք ուրեմն ինձ, Վեհափառ Տէր իմ և Հայր, յայտնել Ձեզ, որպէս որդի՝ զի ծածուկ ինչ ունիս որդւոյ 'ի հօրէն մեծ մեղք են, թէ ես տեսանելով զայս ամենայն յոյժ և յոյժ տարակուսած եմ և վերջապէս չգիտեմ ո՞մ պիտոյ է հաւատալ և ո՞մ ոչ։ Ձերոյին Վեհափառութիւնն 'ի Մոսկուա եղած ժամանակ բերանացի խոստացայք քննել Աթոռոյդ տպարանի անկարգ գործը և տալ մեզ բաւականութիւն։ Ցետ այնորիկ 'ի 1868 ամի Գերյարգոյ Սրբազան Պետրոս եպիսկոպոսն, գրութեամբն 'ի 16 էն Հոկտեմբերի, 'ի կատարումն հրամանի Ձերոյին Վեհափառութեան, ծանոյց՝ թէ խնդիր մեր ընդ փոյթ ունի կատարումն առնուլ յօգուտ մեր։ Եւ վերջապէս յայտմ՝ 1874 ամի, երբ ես յաժարեցայ մնանալ զհատուցած մեղ միասք՝ միայն որ „Մաներ Ռամունքն ազգային եկեղեցական Պատմութեան“ ընդունուի իբրև հրահանգ մեր հոգևոր և ծխական դպրոցաց մէջ, Գերյարգոյ Սրբազան Մեսրոպ եպիսկոպոսն, գրութեամբն

'ի 27 էն Մարտի, ծանոյց՝ թէ դքննութեան արդիւնս Ուսումնական ժողովոյդ ունիմ ընդ փոյթ նկատել և ընթեռնուլ „ՅԱրարատ“ ամսագրի։ Եւ ի՞նչ եղև· եղև այն՝ զի առաջին խնդիր իմ 'ի մասին հատուցանելոյ ինձ 2400 ռուբլի վնասն եղեալ 'ի տպագրութենէն „Հաւատապատում“ և „Քրիստոսապատում“ տեարակաց ՅԷջմիածին, չարժանացաւ կատարումն առնուլ, և դէնի վեց ամայ մերժուեցաւ, ենդարկելով զիս տուգանաց· իսկ երկրորդ խնդիր իմ՝ 'ի մասին ընդունելոյ „ՂԱԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ“ իբրև հրահանգ՝ ոչ միայն չունդունուեցաւ, այլ կասկածաւոր ևս ցուցուեցաւ հրատարակմամբ քննութեան Աբել արքեպիսկոպոսի „ՅԱրարատ“ ամսագրին։ Ուստի 'ի միտ առնլով զայս ամենայն ես խոնարհաբար դիմեմ վերջին անգամ, գուցէ և կենացս մէջ, առ Վեհափառութիւն Ձեր, և խնդրեմ՝ զի եթէ մոլորեալ եմ, թողէք զենտուն և զենն ոչխարը և գնայէք զհետ մոլորելոյն, և ցուցէք նմա ղուղիղ ճանապարհը 'ի լոյս ելանել· իսկ եթէ մոլորեալ չեմ և պահանջողութիւն իմ արդարացի է՝ աղաչեմ՝ յայտնել զՁեր արդարացի վճիռը։ Ես մտածել անգամ չկամիմ՝ թէ այսպիսի անկանոն գործ տպարանի Սրբոյ Աթոռոյդ ունի անցանել անպատիժ, և թէ այսպիսի պիտի լինէր ծերունի հօրս վարձատրութիւնը՝ իւր յինամեայ հաւատարիմ և քրանախոնջ աշխատանաց ազգի և եկեղեցւոյ համար՝ Ձերոյին Վեհափառութեան Հայրապետութեան օրերում։ Յուսամ նոյնպէս՝ զի և Վեհափառութիւն Ձեր, որպէս Գլուխ եկեղեցւոյ և ազգասէր պաշտպան լուսաւորութեան և գիտութեան, չպիտի անտես առնէք Ձեր հարազատ զաւակի այս խնդիրքը· այլ ընդհակառակն պիտի քաջալերէք զիս շարունակելու սկսած աշխատութիւնքը, և չպիտի թոյլ տաք ինձ 'ի յուսահատութենէ հրոյ ճարակ առնել հօրս անդին երկասիրութիւնքը, և թողուլ աշխարհին և զաւակաց աւանդ՝ հեռանալ և փախչիլ այնուհետև յաշխատելոյ յօգուտ ազգի և եկեղեցւոյ։ Բայց եթէ այս իմ բոլոր յոյսերս 'ի թերև ելանեն, այնուհետև թող պանծան և պարծին որքան և կամին իւրեանց գիտութեամբ և ազգասիրութեամբ հեղինակքն „Ժողովոց“, „Խորհրդոց“ այլն պատմութեանց, ևս և „Նախաշաւղաց“, „Լուսաշաւղաց“ և այլն, և այլն *)“։

---

*) Այս թուղթս մնաց անպատասխան։

Այս տխրալի, բայց և խրատական պատմութիւնն կարծեմ լիակատար կարող չէ համարուիլ՝ եթէ չյաւելացնեմ և զայս՝ թէ իմ պահանջողութիւնն 'ի տպարանէն Արբոյ Էջմիածնի 2400 ռուբլի ինասուց, մարմնաւոր դատաստանի չհասաւ։ Վասն զի՝ դարձեալ իմ բարութիւնն, Հայոց Կաթողիկոսի՝ ով և լինի նա՝ անունն, որ միշտ պաշտելի է իմ համար, ևս և զիտնական Վահան վարդապետի ազգասիրական յորդորանքն, թոյլ չաուին ինձ կատարել զիմ՝ զիտաւորութիւնը· այլ յօժարամտութեամբ դադարեցուցի ես զիշեալ դատը, և այն 2400 ռուբլի արծաթն, զոր ես ունէի իրաւունք ստանալու դատաստանաւ Էջմիածնական տպարանէն, համաձայն Տէրութեան օրինաց, նուիրեցի Էջմիածնական Նորակառոյց Հեմարանին։

Զարմայր Մ· Մոէրէանց։

30 Նոյեմբերի 1874 ամի 'ի Մոսկուա։

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

Հրատարակուեցաւ Ակադեմիկ Պ· Պրոսսէի հետևեալ երկասիրութիւնն՝ որ ունի վերնագիր· „Collection d'historiens arméniens. Th. Ardzrouni, X-e s., Histoire des Ardzrouni; Arakel, de Tauriz, XII-e s., Livre d'histoires; Iohannès de Dzar XVII-e s., Histoire de l'Aghowanie; traduits par M. Brosset. Հատոր Ա·"։

* * *

Հրատարակուեցաւ 'ի Կ· Պոլիս „Հաղորդ և մի ասակասոր քանի" վերնագրով Գաբրիէլ արքեպիսկոպոսի Այվազեան նոր երկասիրութիւնն, զոր Կ· Պոլսոյ Հայ լրագիրքն գովութեամբ են յիշում։

ՀԱՐՑՄՈՒՆՔ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ

Հ· Քաջառողջ լինելոյ համար ի՞նչ պէտք է առնել։
Պ· Պէտք է ըստ ախորժակի ուտել, խմել և զուարճանալ (Էջմիածնական Օրացոյց 1875 ամի)։

***

Հ· Առողջութիւնը պահելոյ համար ի՞նչ պէտք է առնել։
Պ· Զափաւոր աշխատել (Նոյն)։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ։

Ընցեալ ամի Սեպտեմբեր ամսում հրատարակած յայտարարութեամբս՝ ես խոստացած էի հետզհետէ տպագրել իմ հանգուցեալ ծնողիս՝ Մսերայ Մ· Մսերեանց՝ կրօնական դասատեսարները, ընդ որս և նորա „Դասք յեկեղեցական պատմութեանց“, որք աւանդուում էին Լազարեան Ճեմարանի վերին դասատանց աշակերտաց, և իմ այս խոստման կատարումը ես արդէն սկսած էի հրատարակմամբ „Մանր Ուսմունք ազգային եկեղեցական պատմութեան“ վերնագրով դասատեսարի։

Այժմ ցաւելով պարտաւորուած եմ ծանուցանելու իմ սիրելի ազգայնոցս, նախ թէ՝ ես՝ այն յայտարարութեան մէջ յիշատակուած կրօնական երկասիրութիւնքը, որք արդէն զրաքննական ժողովով քննուած և տպագրութեան համար պատրաստ են, 'ի պատճառս վերոյիշեալ „Մանր Ուսմունք ազգային եկեղեցական պատմութեան“

դասատեսրի՝ իմ և Էջմիածնական „Արարատ“ տմապրի մէջ ծագած վիճաբանութեան, ևս և 'ի պատճառս չունենալոյս ամենևին յոյս՝ որ զիշեալ կրօնական դասագրքերը, զկնի տպագրութեան, մեր Հոգևոր Իշխանութիւնն ընդունէ որպէս հրահանգ մեր ազգային և հոգևոր դպրոցներում, — հարկադրուած եմ առժամանակ մի անտիպ թողուլ՝ նորանոր վնասուց չանկանելու համար, և ապա՝ թէ ես 'ի տեղի յիշեալ կրօնական երկասիրութեանց՝ պատրաստեցի և շուտով կսկսեմ տպագրել իմ ծնողիս այլ երկու մեծահատոր երկասիրութիւնքը, այն է՝ առաջին „Պատմութիւն Կաթողիկոսաց Էջմիածնի 'ի Սիմէոնէ մինչև յՅովհաննէս Ը“, և երկրորդ նորա „Նամակագրութիւն յատկեն 1830 մինչև 1873“, որ լի է պատմական, գրականական և ազգային տեղեկութեամբք։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ ԳՏԱՆԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՍԻՄԷՕՆԷ ՄԻՆՉԵՒ ՅՅՈՎՀԱՆՆԷՍ Ը.

ԱՄՍ ՏԵԱՌՆ 1763—1831

Գրեալ

Ի ՄԵՐԱՑ ՄԱԳԻՍՏՐՈՍԷ ՄՍԵՐԵԱՆՑ

ԶՄԻՒՌՆԱՑՒՈՑ։

Տպագրութեամբ Զարմայրայ Մսերեանց։

Զարմայր Մսերեանց։

6· ՆՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ Հայերէն և Ռուսերէն· Զարմայրայ Մ· Մսէրեանց· Գին իրաքանչիւրոյ 25 կ· արծ·
Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 22 կոպ·
» » » 50 » » 20 »
» » » 100 » » 18 »

7· ՃՌԱՔԱՂ՝ Կրօնական, Բանասիրական և Ազգային դիտելեաց վերաբերեալ յօդուածներով լի, և 646 երեսէ բաղկացեալ երկու մեծ հատոր գիրք, գեղեցիկ տպագրութեամբ· Գինն է 3 ռուբ· արծ· Հանդերձ առաքմամբ։

8· ՄՍԵՐԱՑ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄՍԵՐԵԱՆՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ· Հատոր Ա· ԽՄԲԱԳԻՐ Հաւաքեալ Բանից· Հեղինակի կենդանագրաւ· Մոսկուա· 1864 ամի, 212 երես։ Սակաւաթիւ։ Գինն է՝ 3 ռուբ· արծ· Հանդերձ առաքմամբ։

9· ՀՐԱՀԱՆԳ Քրիստոնէական Հաւատոյ ըստ Ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց, ընդարձակեալ համապատշաճ վկայութեամբ· Ի գրոց լեզու· Նոյն հեղին· Տիպ առաջին 1850 ամի։ Սակաւաթիւ։ Գինն է 10 ռուբ· արծ· Հանդերձ առաքմամբ։

10· ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1853· 219 երես· գինն է 1 ռ· 50 կ· Հանդերձ առաքմամբ։

11· ՂԱԶԱՐԱՑ ՓԱՐՊԵՏՅՈՑ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Մոսկուա, 1853· 68 երես· գինն է 1 ռ· Հանդերձ առաքմամբ։

12· ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ քահանայի Վանանդեցւոյ ՃԱՌ Ներբողական ի Սուրբ խաչն Քրիստոսի, և Պատմագրական առասպելութիւն ի սուրբ Նշանն Վարագայ, և և Սեւեբրիանոսի Գաբաղացւոյ Եպիսկոպոսի ճառ ի վերայ բանին՝ թէ «Հուր եկի արկանել յերկիր» և այլն· Մոսկուա, 1853, 118 երես, գինն է 50 կ· Հանդերձ առաքմամբ։

Յանկացողքն սահմանեալ ի վերոյ նշանակեալ գրքերից կարող են իւրեանց գրամը դիմել առ իս (г. Зармайру Мсеріанцъ, въ Москву, близъ Меньшиковой башни, домъ Милованова), ուղարկելով միանգամայն և պատկանեալ գումարը, և ես պատրաստ եմ առաջին փոստիւ կատարել նոցա յանկութիւնը։

Զարմայր Մսէրեանց։

„ПАРОСЪ“ въ переводѣ „МАЯКЪ“
Литературный сборникъ.

ВЫПУСКЪ 4-й 1875 г.

ՌՈՍԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Ի զրուածոց Ներսիսի Ե. Կաթուղիկոսի ամենայն Հայոց. ա. Ո՛չ բնաւ դատնի հաւատարակշռութիւն իւիք Կաթուղիկոսացն անուանելոց յԱղթամար և Ի Սիս բնդ Կաթուղիկոսաց Էջմիածնի . . . . . Էջ. 1.

Բ. Պատկերն ղեկուցումն Ի վաթառնեւութեն ամենի տարաբաղդ ծերունի Մանուել վարդապետս Կիւմիւշխանեցւոյ առ Լուսաւորչակրօն գերապատուելի Ազգին իմոյ և Հոգևորականաց և Աշխարհականաց . . . . . 6.

Գ. Յուսան և զորպէսն Մասր գպրի. Հատուած Ի պատմութենէ Մանուել վարդապետի . . . . . 21.

Դ. Մատենագրութիւն: „Եկեղեցական պատմութիւն“ Մանդինեանցի: — „Ցամբռ“: — „Տոմար ընդանեկան“: — „Ներբող Ներսիսի Լամբրոնացւոյ“: 24.

Ե. Երկու պատասխան „Արարատ“ ամսագրին, և մեր դատն Էջմիածնական տպարանի հետ ազգիս արդար դատաստանի առաջև . . . . . 36.

Զ. Ներաստիպ մատեանք . . . . . 58.

Է. Հարցմունք և պատասխանիք . . . . . 59.

Ը. Ծանուցումն . . . . . —

Թ. Արտաքին ձև Տփխիսոյ Հայոց Ա աջնորդարանին (վիմագիր պատկեր):

Ժ. Յայտարարութիւն:

Այս տետրակի գինն է 40 կ. արծ:

Дозволено цензурою. С.-Петербургъ, 17 Декабря 1874 г.